

Մ. ՇԱՀԲԱԶՅԱՆ

ԲՍՄԲԱԿԻ ԲԱՐՁՐԻ ԲԵՐՔԻ ՀԱՄԱՐ



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՍՍՏՐ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1948

КНИГА ДОЛЖНА БЫТЬ
ВОЗВРАЩЕНА НЕ ПОЗЖЕ
УКАЗАННОГО ЗДЕСЬ СРОКА

633.51	12394	
Б-16	Воскресенский, И.	дек. 22
Воскресенский, И.	ршрзр рбртр	
наименование	30	

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՍՆԿՏՈՐ

633.51

Գ-16

Մ. ՇԱՀԲԱԶՅԱՆ

ՊՏՈՒԳՎԱԾ Է 1961 թ.

ԲԱՄԲԱԿԻ ԲԱՐՁՐ ԲԵՐՔԻ ՀԱՄԱՐ

12394

A 18394



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿԱԳՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1948

М. ШАХБАЗЯН
ЗА ВЫСОКИЙ УРОЖАЙ ХЛОПКА
(На армянском языке)
Изд. АН Арм. ССР, Ереван, 1948 г.


Ը Ն Թ Ե Ր Ց Ո Ղ Ն Ե Ր Ի Ն

Այս գրքույկում ընդհանրացված է բամբակագործության առաջավորների փորձը, որի ռեսուլտատները կատարվել է 1947 թվին:

Փորձի շարադրումը կատարված է հաշվի առնելով մասն գյուղատնտեսական գիտա-հետազոտական հիմնարկների տվյալները:

Գրքույկի համար նյութեր հավաքելու աշխատանքներին մասնակցել են Հայկական ՍՍՌ-ի Գյուղատնտեսության Մինիստրության ագրոնոմներ՝ ընկ. ընկ. Բ. Մկրտչյանը և Ռ. Ամբրուսյանը:

Այս գրքույկի մասին բոլոր դիտողությունները խնդրում ենք ուղարկել ՀՍՍՌ-ի Գիտությունների Ակադեմիայի Տնտեսագիտության ակտորին, Երևան, Արավյան № 61 հասցեով:



1. Ն Ե Ր Ա Ծ Ա Կ Ա Ն

Հայրենական Մեծ պատերազմի հաղթական ավարտումից հետո բոլշևիկների պարտիան և Սովետական կառավարութիւնը անմիջապէս ձեռնամուխ եղան ժողովրդական տնտեսութեան ամենաարագ վերականգնմանը:

Համկ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի փետրվարյան պլենումը, Ստալինյան նոր հնգամյակի օրենքին համապատասխան, նշեց երկրի գյուղատնտեսութեան ամենաարագ վերականգնման և զարգացման բոլոր անհրաժեշտ միջոցառումները:

«Այժմ, — ասվում է Համկ(բ)Պ ԿԿ-ի պլենումի որոշման մեջ, — խաղաղ շինարարութեան անցնելուց հետո, մեր պարտիայի և պետութեան առաջ նորից, որպէս ամենաանհետաձգելի խնդրի, ամբողջ հասակով մեկ ծառացալ գյուղատնտեսութեան այնպիսի վերելքի ապահովումը, որը թույլ կտա ամենակարճ ժամանակում ստեղծել պարենի առատութիւն՝ մեր բնակչութեան համար, հումքի՝ թեթեւ արդյունաբերութեան համար և պետական անհրաժեշտ պարենային ու հումքային ռեզերվների կուտակում»:

Բամբակագործութեան բնագավառում Պլենումը առաջադրեց 1947—1949 տարիների ընթացքում լիովին վերականգնել ու գերազանցել բամբակի արտադրութեան ժինչպատերազմյան մակարդակը:

Այդ խնդիրներին լիակատար համապատասխան պետք է զարգանա նաև Սովետական Մեծ Միութեան անբաժանելի մասի՝ Հայկական ՍՍՌ-ի բամբակագործութիւնը:

Հետպատերազմյան Ստալինյան հնգամյակի ժողովրդատնտեսութեան ընդհանուր պլանի մեջ մտնող մեր ռեսպուբլիկայի բամբակագործութեան հետպա վերելքի մասշտաբները բավականաչափ մեծ են: Նախատեսված է բամբակի բերքատուլութիւնը

բարձրացնել մեկ հեկտարից մինչև 21 ցենտների (աճը՝ 140⁰/₀, 1945 թ. համեմատությամբ), ընդարձակել բամբակենու ցանքերը 1500 հեկտարով (աճը՝ 14⁰/₀) և դրանով իսկ բամբակի հումքի համախառն բերքը հասցնել մինչև 315 հազար ցենտների, այսինքն՝ 1945 թ. ցուցանիշները ղերադանցել մոտ 270 տոկոսով:

Բերված թվերը ցույց են տալիս, որ բամբակագործության ընազավառում սոցիալիստական երկրագործության աշխատողների հիմնական խնդիրը պետք է լինի ամեն կերպ տպահովել բամբակի դաշտերի բերքատվության արագ բարձրացումը: Այդ իրականացնելու համար անհրաժեշտ է հայտաբերել և օգտագործել բամբակագործության այն բոլոր ներքին հնարավորությունները, որոնք մինչև այժմ լրիվ չեն օգտագործված: Իսկ որ կան այդպիսի հնարավորություններ, այդ մասին է խոսում ողջ Սովետական Միության և մասնավորապես Հայկական ՍՍՄԻ-ի բամբակագործական առաջավոր կոլխոզների փորձը:

Բամբակենու բերքի բարձրացման հսկայական հնարավորություններ կան, հատկապես նախացանքային աշխատանքների և բույսերի խնամքի որակի հետագա բարձրացման, հանքային պարարտանյութերի ճիշտ օգտագործման, խնչպես նաև արտադրության մեջ բամբակենու բարձր բերքատու սորտեր մտցնելու, մոլախոտերի, հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարելու ընազավառներում:

Բամբակի բերքի բարձրացման հիմնական ռեզերվներից մեկը հանդիսանում է մեկ միավոր տարածության վրա բամբակենու բույսերի անհրաժեշտ խտության ապահովումը: Մեզ մոտ տակավին հազվագյուտ են բույսերի նորմալ խտությամբ այնպիսի լիարժեք տարածություններ, երբ մի հեկտարի վրա լինում է 100—110 հազար բույս: Դեռևս մեր կոլխոզները մեծ մասամբ ապահովում են բույսերի խտության անհրաժեշտ նորմայի միայն 70—75 տոկոսը, որի հետևանքով Հայկական ՍՍՄԻ-ում փաստորեն չի օգտագործվում բամբակի ցանքի ավելի քան 3 հազար հեկտար տարածություն, կամ՝ 30—50 հազար ցենտներ բամբակի բերք:

Բոլորին հայտնի է, որ հասունացման սկզբին բամբակենին, որպես կանոն, պահպանում է կնգուղիների կեսից ոչ ավելին,

այսինքն՝ բամբակենու պտղավիժումը 50 տոկոսից ավելի է լինում: Դա հիմնականում բացատրվում է ցածր ագրոտեխնիկայով, խնչպես և ջրման ու բույսերի սննդային ռեժիմի ոչ ճիշտ խարդավորմամբ:

Բամբակենու առատ պտղակալման առավել լրիվ օգտագործումը բերքի բարձրացման պարտադիր պայմաններից մեկն է հանդիսանում: Առաջավոր բամբակագործների փորձը նույնպես բացառիկ հետաքրքրություն է ներկայացնում այս ռեզերվի օգտագործման խնդրում:

Հիշյալ ռեզերվներն իհարկե չեն սպառում բամբակագործությունն ընդհանուր հնարավորությունները, քանի որ նրանց թիվը շատ մեծ է: Այդ հնարավորությունների հաջող օգտագործման խնդիրը առաջին հերթին պետք է լուծեն մեր սոցիալիստական կոլխոզային գյուղում աճած մարդիկ, այն մարդիկ, որոնք Համկ(բ)ՊԿԻ-ի փետրվարյան պլենումի պատմական որոշումը հրապարակվելու առաջին իսկ օրերից մեծ խանդավառությամբ ձեռնարկեցին նրան կյանքում իրականացնելու գործին:

Բամբակացան շրջանների, կոլխոզների և ՄՏԿայանների ընդհանուր ազնիվ աշխատողների գործերն ու մտքերը ուղղվեցին ղեպի մի նպատակ—աճեցնել և հավաքել բամբակենու բարձր բերք և հումքով ապահովել մեր տեքստիլ արդյունաբերությունը:

Ոչ թե պաշտպանվել դժվարություններից, այլ հարձակման անցնել նրանց վրա, որպիսզի կարելի լինի ամենակարճ ժամկետում վերացնել այդ դժվարությունները, առաջ շարժել մեր բամբակագործությունը,—այդպես էր պայքարի ուղղությունն առաջին իսկ օրերից:

Կոլխոզնիկներին և ՄՏԿայանների աշխատողներին Սոցիալիստական Աշխատանքի Հերոսի կոչում շնորհելու և ՍՍՌՄ շքանշաններով ու մեդալներով պարգևատրելու մասին ՍՍՌՄ Գերագույն Սովետի կողմից 1947 թ. մարտ ամսին հրապարակված Հրամանագրերը մի նոր հզոր խթան հանդիսացավ կոլխոզային գյուղում՝ բարձր բերքի համար տարվող պայքարի առաջավոր դիրքերը աշխատավորների նորանոր ջոկատներ դուրս բերելու գործում: Այդ պայքարի հզոր գործոններից մեկն է հանդիսանում սոցիալիստական մրցումը կոլխոզային գյուղում:

Այս մրցման աչքի ընկնող հատկանիշն այն է, որ նա համակցում է օղակների, բրիգադաների, բոլոր կոլտոգնիկների հաջողությունները կոլտոգի հաջողության հետ ամբողջությամբ վերցրած: Այստեղ մրցումը ընդունեց իսկապես մասսայական, ընդհանրական բնույթ:

Հրամանագիրը բարձրացրեց բոլոր կոլտոգնիկների շահագրգռվածությունը՝ կոլտոգի կողմից պետության առաջադրանքները ամբողջությամբ կատարվելու ուղղությամբ, քանի որ այն բրիգադիրը, օղակավարը, շարքային կոլտոգնիկը, ուր բարձր ցուցանիշներ է ձեռք բերում, ստանում է պարգև միայն այն դեպքում, երբ կոլտոգը ամբողջությամբ վերցրած ապահովում է պլանային բերքի ստացումը բոլոր այն կուլտուրաների ցանքային տարածությունից, որոնք սահմանված են պետական պլանով, և կատարում է պետական հանձնառվություն ու ՄՏԿայանների աշխատանքների բնավարձի պլանը:

Այդպիսով առաջավորների շարժումը հիմնվում է գյուղատնտեսության ընդհանուր վերելքի համար ծավալված մասսայական շարժման հաստատուն հիմքի վրա:

Հայկական ՍՍՌ-ում քիչ չէ այնպիսի կոլտոգների և կոլտոգնիկների թիվը, որոնք, շնորհիվ իրենց անձավեր և ձիշտ կադմակերպված աշխատանքի, ստացել են գյուղատնտեսական տարբեր կուլտուրաների և առանձնապես բամբակի ու կորդային բերք:

Եթե բամբակի միջին բերքատվությունը Հայկական ՍՍՌ-ում ամբողջությամբ վերցրած, 1947 թվին այնքան էլ բարձր չի եղել, ապա առանձին, լավագույն կոլտոգներ, բրիգադաներ և օղակներ ստացել են ղգալիորեն բարձր բերք: Այսպես, Արտաշատի շրջանի № 4 գյուղի Շահումյանի անվան կոլտոգը 91 հեկտարի վրա միջին բերքը մեկ հեկտարից ստացել է 16,2 ցենտներ, Հոկտեմբերյանի շրջանի Փ. Շահբաբ գյուղի Ներոյր Իսախանյանցի անվան կոլտոգը 165 հեկտարի վրա ստացել է յուրաքանչյուր հեկտարից 18,73 ցենտներ, Արտաշատի շրջանի Դովին գյուղի «Շինարար» կոլտոգը 43 հեկտարի վրա միջին հաշվով մեկ հեկտարից ստացել է 23,2 ցենտներ: Նման կոլտոգների ցուցակը կարելի է շատ ավելացնել:

Ավելի բարձր բերք ստացել են այդ առաջավոր կոլտոգների շատ օղակներ:

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Տնտեսագիտության սեկտորը ուսումնասիրել է բամբակենու բարձր բերքի օղակների փորձը:

Ովքեր են այդ օղակների ղեկավարները, մեր կոլտոգներում են այդ օղակներն առաջացել և ինչպիսի՞ արդյունքների են հասել նրանք:

Համառոտ կերպով պատասխանենք այս հարցերին:

Մեր ուսումնասիրության առաջին օղակը Բոլոգյան Հովտեմբերիկի երիտասարդական օղակն է: Երիտասարդ կոմերիտուհի Բոլոգյանը մինչև 1943 թ. սովորել է միջնակարգ դպրոցում և միաժամանակ աշխատել է կոլխոզում:

Ավարտելով 10-րդ դասարանը, Հովտեմբերիկը ամբողջովին լքվեց կոլխոզի աշխատանքների: Իր բարեխիղճ աշխատանքով Բոլոգյանը աչքի էր ընկնում հասակակիցների մեջ և իր վրա գրավեց փորձառու կոլխոզնիկների ուշադրությունը: Հաշվի առնելով Հովտեմբերիկի ղեպի աշխատանքը տաժած բարեխիղճ վերաբերմունքը, կոլխոզային գործին նվիրվածությունը և նրա աշխիւթյունը, կոլխոզի վարչությունը 1945 թվի աշնանը նրան հանձնարարեց կազմակերպել բամբակենու մշակման երիտասարդական օղակ:

Բոլոգյանն իր օղակը կազմակերպեց ութ կոմերիտուհիներից, 1945 թ. աշնանը: Առաջին իսկ տարին Բոլոգյանը, խորհրդակցելով իր օղակի անդամների հետ, սոցիալիստական պարտավորություն ստանձնեց աճեցնել և 1946 թ. պետությանը հանձնել երեք հեկտար տարածության յուրաքանչյուր հեկտարից 25-ական ցենտներ բամբակի հումք և իր վրա վերցրած պարտավորությունը գերակատարեց, տալով հեկտարից 30 ցենտներ բամբակ: Ոգևորված ձեռք բերված հաջողությունով, և աջակցություն ստանալով իր օղակի անդամների կողմից, Բոլոգյանը պարտավորություն ստանձնեց 1947 թ. պետությանը տալ երեք հեկտար տարածության յուրաքանչյուր հեկտարից 50-ական ցենտներ բամբակի հումք, իսկ օղակին ամբողջած մնացած 6,5 հեկտար ցանքադաշտի յուրաքանչյուր հեկտարից՝ 20 ցենտներից ոչ պակաս:

Բոլոգյանը պատվով կատարեց իր վրա վերցրած պարտա-

վորությունը, հանձնելով երեք հեկտար ցանքատարածությունից 255 ցենտներ բամբակի հումքի համախառն արտադրանք, որը միջին հաշվով մեկ հեկտարին ընկնում է 85,1 ցենտներ բերքիսկ մնացած 6,5 հեկտարից էլ—151 ցենտներ կամ մեկ հեկտարից՝ 23,3 ցենտներ:

Հոկտեմբերիկ Քոլոզյանի օղակը Հոկտեմբերյանի շրջանի Փ. Շահրիար գյուղի Ներորդ Ինտերնացիոնալի անվան բամբակագործական կոլխոզի ամենաառաջավոր օղակն է: Կոլխոզն իր հերթին հանդիսանում է նույնպես շրջանի առաջավորներից մեկը:

Կոլխոզի նախագահը, Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի դեպուտատ Յուլարաշ Ավչյանը իր լավ աշխատանքի համար պարգևատրվել է Լենինի շքանշանով:

Կոլխոզում կիրառվում է Զ-դաշտյա խոտադաշտային ցանքաշրջանառություն: № 2 բրիգադան, որի մեջ է մտնում Քոլոզյանի բարձր բերքի օղակը, հանդիսանում է կոլխոզի ամենալավ բրիգադան:

Բրիգադիր Լաչինյան Սիմոնն այդ բրիգադայի ղեկավարն է՝ 1932 թվից սկսած: 1942 թվից մինչև 1944 թ. Լաչինյանը եղել է բանակում:

Ներկորդ բրիգադայի ցուցանիշները գերազանցում են կոլխոզի միջին լավ ցուցանիշները: Եթե միջին հաշվով կոլխոզը 1947 թ. մի հեկտարից ստացել է 17,7 ցենտներ, ապա Լաչինյանի բրիգադան 34,5 հեկտարի յուրաքանչյուրից ստացել է միջին հաշվով 19,31 ցենտներ:

Միայն այսպիսի առաջավոր կոլխոզի և բրիգադայի պայմաններում կարող էր առաջանալ Քոլոզյան Հոկտեմբերիկի ու կորդային բերքի օղակը:

Բամբակենու բարձր բերքի հետևյալ օղակը հանդիսանում է Արտաշատի շրջանի № 4 գյուղի Շահումյանի անվան կոլխոզի կոմբիտուհի Մելիքյան Աղաֆու օղակը: Մելիքյան Աղաֆուն երիտասարդական օղակը՝ բաղկացած յոթ կանանցից և չորս տղամարդկանցից, երեք հեկտար հողամասից 1947 թ. յուրաքանչյուր հեկտարից միջին հաշվով ստացել է 63 ցենտներ բամբակի հումք:

Ինչպես Քոլոզյանի օղակը, նույնպես և Մելիքյանի օղակը

այդ արդյունքը ձեռք է բերել այնպիսի լավ կոլխոզի աշխատանքի պայմաններում, ինչպիսին հանդիսանում է Շահումյանի անվան կոլխոզը, որն անցյալ տարի 91 հեկտարի յուրաքանչյուրից ստացավ բամբակի 16,2 ցենտներ միջին բերք:

Մեկիքյան Աղաֆուս բարձր բերքի օղակը կազմակերպվել էր երկրորդ գաշտավարական բրիգադայում: Այդ բրիգադան արդեն չորս տարվա ընթացքում ստանում է ավելի բարձր բերք, քան կոլխոզն ամբողջությամբ վերցրած: 1945 թ. բրիգադան իրեն ամրացված 20 հեկտար հողամասից ստացել է յուրաքանչյուր հեկտարից 20 ցենտներ, 1946 թ.՝ 19 ցենտներ, իսկ 1947 թ., աննպաստ եղանակների պայմաններում՝ 18 ցենտներ:

Երրորդ օղակը, որի փորձն ուսումնասիրված է մեր կողմից, ղեկավարում է Արտաշատի շրջանի Ն. Դվին գյուղի «Շինարար» կոլխոզի օղակավարուհի Քոչարյան Սիրուշը:

Օղակավարուհի Քոչարյանը իր պարտականություններն ստանձնել է Հայրենական պատերազմի ամենածանր տարում — 1942 թվին: Աշխատելով մի քանի տարի, նա աշխատանքի հարուստ փորձ կուտակեց և ձեռք բերեց գիտելիքներ, որոնք անհրաժեշտ են բամբակագործության առաջավոր ազդեցությունից կիրառման համար:

1945 թ. այդ օղակին ամրացվեց չորս հեկտար տարածություն մի հողամաս: Քոչարյանը խոստացավ տալ ամեն մի հեկտարից 26 ցենտներ բամբակի բերք: Կիրառելով բարձր ագրոտեխնիկայի գծով կուտակված փորձը, նա կատարեց իր խոստումը և յուրաքանչյուր հեկտարի վրա աճեցրեց 27 ցենտներ բամբակի հումք:

1946 թ. նա իր վրա վերցրեց նոր պարտավորություն՝ յուրաքանչյուր հեկտարից հանձնել 45 ցենտներ բամբակ: Միևրուշը պատվով կատարեց ստանձնած պարտավորությունը, յուրաքանչյուր հեկտարից հավաքելով 48 ցենտներ բամբակ:

1947 թ. Համկ(բ)Պ ԿԿ-ի փետրվարյան պլնումի պատճառան որոշումները և գյուղատնտեսական կուլտուրաների բարձր բերք ստանալու համար կոլխոզնիկներին Սոցիալիստական Աշխատանքի Հերոսի կոչում շնորհելու և ՄՍՌՄ շքանշաններով ու մեդալներով պարգևատրելու մասին ՄՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության որոշումը ոգևորեցին Քոչարյան Սիրուշին՝

աշխատանքային նորանոր սխրագործություններ կատարելու: Կոլխոզնիկների և կոլխոզնիկուհիների կողմից Մեծ Ստալինին ուղղված նամակում ընկ. Քոչարյանը խոստացավ 1947 թվին յուրաքանչյուր հեկտարի վրա մշակել 50 ցենտներ բամբակի հումք:

Շնորհիվ բարձր ագրոտեխնիկայի կիրառման, օդակավաբուհու տված խոստումը կատարվեց: Օդակը յուրաքանչյուր մեկ հեկտարից տվեց 55 ցենտներ բամբակի հումք:

Իր խոստումը գերադասարելու համար «Շինարար» կոլխոզի փոխանցիկ դրոշը հանձնվեց Սիրուշ Քոչարյանի օդակին: № 3 բրիգադան (բրիգադիր՝ Ավագյան Խաչատուր), որի մեջ մտնում է Քոչարյանի օդակը, հանդիսանում է ամենաառաջավորներից մեկը ինչպես կոլխոզում, նույնպես և ռեսպուբլիկայում:

Ոռոգող Ավագյանը, որ բրիգադիր էր դեռևս մինչև բանակ կանչվելը, շատ լավ դիտե առաջավոր ագրոտեխնիկայի կիրառման մեթոդները: Վերջին երկու տարիների ընթացքում բրիգադային ամբացված բամբակենու ցանքի ամբողջ տարածությունը վրա (8 հեկտար) նա ստանում է յուրաքանչյուր հեկտարից 33,5 ցենտներ բերք:

Քոչարյան Սիրուշի հարազատ կոլխոզը (Դվին գյուղի) նույնպես համարվում է ամենաառաջավոր կոլխոզ ոչ միայն Արտաշատի շրջանում, այլև Հայաստանի բոլոր բամբակացան կոլխոզների միջև, քանի որ արդեն 3 տարի է, ինչ նա բամբակի բերքատվության տեսակետից ռեսպուբլիկայում առաջին տեղիներից մեկն է գրավում:

1945 թվին կոլխոզը 45 հեկտար ցանքադաշտից հավաքեց միջին հաշվով հեկտարից 22 ցենտներ, 1946 թ.՝ 24 ցենտներ և 1947 թվին՝ 23,2 ցենտներ:

Օդակավարներ Քոչարյանը, Մելիքյանը, Քոչարյանը և նրանց անմիջական ղեկավարները—դրանք հետպատերազմյան Ստալինյան հնգամյակի առաջավոր մարտիկներն են: Նրանք կոլխոզային արտադրության նորարարներն են, որոնք օրինակ են տալիս, թե ինչպես պետք է աշխատել: Նրանք այն մարդիկն են, որոնց փորձը խոսում է տնտեսության սոցիալիստական սխեմանում եղած անսահման հնարավորությունների մասին: Նրանք

իրենց աշխատանքի ընթացքում խելացիորեն կազմակերպելով աշխատանքը բրիգադայում և օղակում, ու ճշտորեն կիրառելով ագրոտեխնիկական միջոցառումների սխեմներ, ջախջախում են տեխնիկական հին նորմաները և մեր գործը մղում են դեպի առաջ։ Գործնական խոշոր նշանակութուն ունեցող այս նվաճումների մասին է, որ խոսվում է այս գրքույկում։

2. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՕՂԱԿՆԵՐՈՒՄ

Կոլխոզային շինարարության ընթացքում ապացուցված է, որ ինչքան ավելի լավ է կազմակերպված կոլխոզի աշխատանքը, այնքան ավելի բարձր է նրա արտադրողականությունը, այնքան ավելի արագ է աճում կոլխոզային տնտեսությունը։

Կոլխոզային արտադրությունը մեծագույն փաստ է հասցնում դիմադրելությունը, ինչպես և հանձնարարված գործի ու արտադրություն հանրայնացված միջոցների պահպանման համար պահանջվող պատասխանատվության բացակայությունը։

Ամեն մի արտադրություն մեջ ամենամեծ չարիքը դիմադրելությունն է, որը հնարավորություն է տալիս բարձրացնելու աշխատանքի արտադրողականությունը, բարելավելու աշխատանքի որակը և այն հասցնելու սոցիալիստական տնտեսության արժանի ամենաբարձր աստիճանին։

Աշխատանքը ճիշտ կազմակերպելու և դիմադրելության դեմ պայքարելու համար առաջավոր կոլխոզների փորձը կյանքի է կոչել առաջին հերթին աշխատանքի կազմակերպման բրիգադային սխեմներ։

Արդեն 1932 թվից բրիգադան զարձակ մշտական միավոր, կոլխոզնիկների մշտական կազմով, քաշող ուժի և աշխատանքի գործիքների որոշ քանակով, ինչպես և իրեն ամրացված հողամասերով։ Բրիգադային սխեմնի կիրառումն արժատական փոփոխություն մացրեց աշխատանքի կազմակերպման մեջ կոլխոզներում, օժանդակեց կոլխոզային արտադրության մեջ կարգ ու կանոն մտցնելու գործին։

Կոլխոզում դաշտավարական մշտական բրիգադան վերածվեց հիմնական արտադրական միավորի։ Աշխատանքը ճիշտ կազմակերպել կոլխոզում — այդ նշանակում է առաջին հերթին կարգավորել մշտական դաշտավարական բրիգադաների գործունեությունը։

Բայց որովհետև բրիգադան ունենում է մեծ քանակությամբ կենդանի քաշող ուժ և մեքենաներ, ուստի բրիգադներն ինքը միայնակ ի վիճակի չի լինում անմիջականորեն ղեկավարել յուրաքանչյուր կոլխոզնիկի աշխատանքը: Առանձին կոլխոզնիկների աշխատանքն այստեղ կարող է դիմադրելվել. ծուլը կարող է թաքնվել ագնիվ աշխատավորի թիկունքում:

Այդ բացերը վերացնելու համար առաջավոր կոլխոզները բրիգադայի ներսում սկսեցին ստեղծել բրիգադաների անդամների փոքր խմբեր, որոնց ամրացվում էին տարբեր կուլտուրաների որոշ ցանքամասեր, առաջին հերթին աշխատատար կուլտուրաներից:

Հետագայում այդ խմբերը կոչվեցին օղակներ:

Բրիգադաների ներսում մշտական օղակների երևան դալը բրիգադային սխառնը հասցրին ավելի բարձր աստիճանի: Օղակների շնորհիվ բարձրացավ աշխատանքի կազմակերպվածությունն ու նրա արագորոգականությունը:

1938 թվի դեկտեմբերի վերջին ՄՍՍՄ Հոգժողկոմատում կայացավ Համամիութենական խորհրդակցություն կոլխոզային մշտական օղակների աշխատանքի հարցերի վերաբերյալ: Խորհրդակցությունը մասնակցում էին օղակավարներ, բրիգադներ, կոլխոզների նախագահներ, գյուղատնտեսներ և գիտական աշխատողներ:

Խորհրդակցության ընթերցումն ամենակիցները միահամուռ կերպով ընդունեցին, որ մշտական օղակների վրա հիմնած բրիգադաների աշխատանքը ամբողջովին արդարացնում է իրեն:

«Ինչո՞վ բացատրել առաջավոր կոլխոզների և կոլխոզնիկների հրաշալի ու կիրքներն ու հաջողությունները դաշտավարության և անասնապահության մեջ,—ասել է ընկեր Անդրեևը պարտիայի 18-րդ համագումարում,—նրանով, որ առանձին կոլխոզնիկի կամ օղակի աշխատանքը դժվարելիված չէ, այլ արտահայտված է նրանց աշխատանքի վերջնական արդյունքներում, որ առանձին կոլխոզնիկի կամ կոլխոզնիկների փոքր խմբերի այդ աշխատանքը երևում է և խրախուսվում է նյութապես»:

Հաշվի առնելով օղակների աշխատանքի փորձը, պարտիայի 18-րդ համագումարը նշեց, որ անհրաժեշտ է «լայնորեն անցնել օղակների կազմակերպմանը կոլխոզներում»:

Այժմ արդեն փորձով միանգամայն տպացուցված է, որ մշտական օդակները տվյալ էությունում հանդիսանում են աշխատանքի կազմակերպման ամենալավ ձևը բրիգադայում:

Մշտական օդակների կազմակերպումով ստեղծվեցին բոլոր պայմանները—վերացնելու գիմադրկությունը հողի մշակման և գյուղատնտեսական կուլտուրաների աճեցման դործում:

Օդակում ստեղծված են լավագույն պայմաններ մրցման և աշխատանքային կարգապահությունը բարձրացնելու համար:

Այստեղ յուրաքանչյուրի աշխատանքը բոլորի աչքի առաջ է. եթե կոլտոշնիկը անփութություն է ցուցաբերում, նրա վրա ազդում է ամբողջ օդակը: Այս բանը հաճախ ավելի ուժեղ ազդեցություն է գործում, քան նկատողությունը կամ հանդիմանությունը: Օդակը չի փոխաբխում բրիգադային, այլ նա բրիգադայի մի մասն է հանդիսանում: Օդակների, ինչպես նաև ամբողջ բրիգադայի աշխատանքի համար պատասխանատու է բրիգադիրը: Դրա հետ միասին օդակի աշխատանքի համար պատասխանատու է օդակավարը: Առանձնապես կարևոր է, որ օդակներում բոլոր շարքային կոլտոշնիկները ներգրավվեն բարձր քերքի համար տարվող պայքարի մեջ:

Եթե կոլտոշնիկներն իրենց օդակում վատ են աշխատել ամբողջ գյուղատնտեսական տարվա ընթացքում, եթե նրանք անստեմատիկորեն չեն կատարել նորմաները, տվել են մշակության ցածր որակ, ուշացրել են աշխատանքների կատարման ժամկետները, ապա և ցածր բերք են ստանում իրենց հողամասում:

Իսկ եթե ընդհակառակը, օդակը տարվա ընթացքում լավ է աշխատել, ժամանակին և բարձր որակով է տարել ամբողջ աշխատանքը, ապա և բերքն էլ նրա մոտ բարձր է լինում: Ուրեմն, մշտական օդակը, սահմանելով աշխատանքի պատասխանատվություն, կոլտոշնիկներին շահագրգռում է իրենց իսկ աշխատանքի վերջնական արդյունքներով—բերքով:

Բաժրահագործական և աշխատատար արժեքավոր տեխնիկական բույսերի այլ շրջաններում (ճակնդեղագործական, կտավատագործական և այլն) օդակների ստեղծումն առանձնապես խոշոր չափով հնչողացրեց բարձր բերք ստանալու պայքարը:

Բրիգադաներում մշտական օդակների կազմակերպումով

լայնորեն ծավալվեց սոցիալիստական մրցությունը: Օղակավար-
ների միջից առաջ քաշվեցին ստախանովյան բերքի տաղանդա-
վոր շատ վարպետներ:

Այդպիսի բամբակագործ օղակավարների անունները, ինչ-
պիսիք են Բաստի Բադիրովան, Ֆայզուլլա Յունուսովը և շատ
ուրիշները, որոնք յուրաքանչյուր հեկտարից ստացել են 80—100
ցենտներ բամբակ, հայտնի են դարձել ողջ Սովետական Միու-
թյանը:

Բամբակի ունկորդային բերք ստանալու գործում մեծ հա-
ջողություններ են ձեռք բերել Հայկական ՄՍԽ-ի շատ օղակա-
վարներ, որոնց թվին են պատկանում նաև Գոլոդյանի, Գոշա-
րյանի և Մելիքյանի օղակները:

Իսկ ինչո՞ւմ է կայանում աշխատանքի կազմակերպման
բնագավառում այդ ստախանովականների ստեղծագործական նա-
խաձեռնությունը: Թվում էր, թե այդ գործում որևէ նոր բան
գծվար է ասել, քանի որ արդեն գտնված է բանուժի դասավոր-
ման և օգտագործման կոլտոգային ձևը հանձինս բրիգադաների,
իսկ դրանց ներսում՝ հանձինս օղակների: Սահմանված են նաև
այդ ձևի բոլոր առավելությունները: Սակայն, տարբեր բան է
գտնել ձևը, օտարեր բան է նրան կիրառել կյանքում ափսոս,
որպեսզի կարելի լինի օգտագործել աշխատանքի կազմակերպ-
ման այդ ձևի բոլոր առավելությունները:

Հայտնի է, որ Հայաստանի ոչ բոլոր կոլտոգներում է, որ
օղակները մշտապես աշխատում են ամբողջված հողամասերում,
հաճախ նրանք զիմադրկվում են, որպիսի հանգամանքը և օղակ-
ներին հասցնում է փաստական լուծարքի:

Զե՞ որ օղակի գոյության ամբողջ իմաստը կայանում է
նրանում, որպեսզի օղակն իր աշխատողների քանակով, իրեն
ամբողջված հողամասի դասավորումով և ինվենտարով ապահովե-
րագորտելիս իկապես կապակցված մի շարք աշխատանքներ՝ կոմ-
պլեքսային կատարումը սահմանված ագրոտելիսիկական ժամ-
կետներում, առանց զիմելու ամեն տեսակի «բուքսիրների»,
«ավրալների» և այլ անթույլատրելի միջոցների, որոնք զիմա-
դրկում են կոլտոգնիկի աշխատանքը և իրականում վերացնում
են աշխատանքի օղակային կազմակերպության բոլոր առավե-
լությունները:

Ուրեմն բանը ոչ միայն նրանում է, որ տիրապետենք քարձր ազրոտեխնիկայի պրիոմներին, այլև կարողանանք որոշ ազրոտեխնիկական միջոցառումներ կենսագործել իր ժամանակին, անթերի և բարձր որակով՝ առանց դիմազրկելու կոլխոզնիկի աշխատանքը:

Ահա թե ինչու մն է կայանում կոլխոզային աշխատանքը կազմակերպողի—կոլխոզի նախագահի, բրիգադրի և օղակավարի հիմնական վարպետությունը:

Հենց այդ վարպետությանն են տիրապետում առաջին հերթին այն կոլխոզների ղեկավարները, որտեղ աշխատել են ընկ. ընկ. Գրյուզանի, Մելիքյանի և Գոշարյանի օղակները:

Բամբալի բարձր բերք ստանալու այդ օղակների ստախանովական փորձը ուսանելի օրինակ է, որը հանդիսանում է առաջավոր ազրոտեխնիկայի և աշխատանքի ճիշտ կազմակերպման հաջող դուգակցման արդյունքը:

Բանի որ մեր կարծիքով ընկ. Գրյուզյանի օղակում աշխատանքն ամենից ավելի լավ էր կազմակերպված, ուստի կրերենք այստեղ այդ օղակի ամենաբնորոշ առանձնահատկությունները, որոնք միանգամայն վերացրին բամբակենու մշակման մեջ եղած դիմազրկությունը և օղակի անդամներին ներշնչեցին ստախանովականներին հատուկ բուրժիկյան թափ, գործունեություն, ձեռներեցություն, հարցերի համարձակ դրվածք, առաջադրված նպատակին հասնելու հաստատակամություն:

Օղակավար Գրյուզյան Հոկտեմբերիկը իր օղակում աշխատանքը կազմակերպեց Հոկտեմբերյանի շրջանի Փ. Շահրիար գյուղի Երրորդ Ինտերնացիոնալի անվան կոլխոզի նախագահ, Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի ղեկավարող ընկ. Ալեյան Յուլիարաշի ղեկավարությամբ:

Ընկեր Գրյուզյանի անմիջական ղեկավարը եղել է փորձառու բրիգադիր Լաչինյան Սիմոնը, որի բրիգադան շատ մեծ արդյունքների հասավ բամբալի բարձր բերքի պայքարում, արդյունքներ, որոնց վրա մենք կանգ առանք նախորդ գլխում:

Ինչպես ավելի ռացիոնալ կերպով կազմակերպել բրիգադայի աշխատանքը մշտական օղակների հիմա վրա: Ի՞նչպես պետք է ճիշտ կառուցել օղակի աշխատանքը բրիգադայի ներսում:



Ահա այն հիմնական հարցերը, որոնց ճիշտ լուծմամբ են առաջին հերթին զբաղվել ընկ. ընկ. Ավչյանը, Լաչինյանը և Գուգյանը:

Կոլխոզի աշխատանքի փորձը ցույց է տալիս, որ օղակները չպետք է դառնան փոքր պատճենն այն բրիգադայի, որի մեջ մտնում են նրանք: Ուրիշ խոսքով, չի կարելի օղակների մեջ բաժանել բրիգադայի բոլոր հոդերը, նրա ունեցած բոլոր աշխատող անասունները, գյուղատնտեսական գործիքները և ինվենտարը: Այդպիսի հավասար բաժանման առաջին բացասական կողմն է կազմում դաշտերի մասնատումը, մի հանգամանք, որ դժվարացնում է տրակտորային ագրեգատների աշխատանքը, աշխատանքների որակի ստուգումը (շնորհիվ նրանց բազմազանությունից և կատարման տարբեր ժամկետների), ինչպես նաև դժվարացնում է աշխատանքի և բերքի անջատ հաշվառումն ըստ օղակների: Օղակներին այդպիսի կազմակերպության հրկրորդ և ավելի բացասական կողմն էլ այն է, որ բրիգադայի կառուցման կազմակերպչական սկզբունքներն անփոփոխ կերպով օղակներին փոխանցելու դեպքում՝ վերջիններս վեր են ածվում փոքր ինքնուրույն բրիգադաների, հակադրվում են հիմնական բրիգադային, որի մեջ մտնում են իրենք, ի վիճակի չլինելով սակայն կատարել ինչպես բրիգադայի, այնպես էլ օղակի ֆունկցիաները:

Ստեղծվում է այնպիսի մի կեղծ գրոսթյուն, երբ կոլխոզում ձևակերտվեն միայն գոյություն ունեն բրիգադաներ և օղակներ, իսկ իրականում այդպիսիք չկան և կոլխոզի աշխատանքներում տիրապետում է դիմադրկությունը: Գիտենալով օղակներին, հիմնականում կարելի է ասել, «մեխանիկական» կազմակերպման այդ պակասությունները, երրորդ ինտերնացիոնալի անվան կոլխոզի դեկավարներն սկսեցին մի այլ ճիշտ ուղիով գնալ:

Նրանք բրիգադային վերադասեցին կոլխոզի ինքնուրույն տրտադրական միավորի բոլոր ֆունկցիաները, միավոր, որը լիովին և ամբողջությամբ պատասխանատու է կոլխոզի արտադրական պլանի մի որոշ մասի կատարմանը, զրա համար ունենալով իր տրամադրության տակ հատուկ առանձնացրած բանող անասուն, ինվենտար և շինություններ:

Երկրորդ բրիգադայի բրիգադիր ընկ. Լաչինյանն իր ամբողջ աշխատանքը կառուցեց հենց այդ հիմնական սկզբունքով:

այն է՝ չդիմադրելի բրիգադայի, որպես կոլխոզի ինքնուրույն արտադրական միավորի, դերը:

Իսկ ինչպե՞ս նա կենսագործեց կյանքում այդ սկզբունքը? Մի քիչ ավելի մանրամասն քննարկենք այս խնդիրը:

Բրիգադային ամրացված էր վարելահողի 71,5 հեկտար տարածութիւն: Այդ տարածութիւնն ըստ կուլտուրաների բաժանված էր հետևյալ կերպ. բամբակ՝ 34,5 հեկտար, առվույտ՝ 12 հեկտար, հացահատիկ՝ 17 հեկտար, խորդենի՝ 2 հեկտար և բանջարա-բոստանային կուլտուրաներ՝ 6 հեկտար: Բրիգադան կազմված էր 42 անդամից, այդ թվում կանայք 32 հոգի: Բրիգադայի կազմում նա կազմակերպեց 5 օգակ: Դոլոզյանի օգակին ամրացվեց 9,5 հեկտար բամբակի ցանք, իսկ մյուս օգակներին ամրացվեցին նաև խորդենու և բանջարեղենի ցանքեր: Օգակից դուրս մնացին բրիգադիւրն ու ձիապանները, որոնց օգակներին ամրացնելը միայն ձևական նշանակութիւն կունենար:

Ինչ վերաբերում է հացահատիկի և առվույտի ցանքերին, ապա նրանք թողնվեցին բրիգադայի տրամադրութեան տակ:

Լաչինյանը որոշեց այդ կուլտուրաների մշակելու աշխատանքը տանել իր անմիջական ղեկավարութեամբ, նրանց ամրացնելով միայն ջրողներին մի խումբ, որի վրա դրեց ժամանակին ջրելու պատասխանատվութիւնը:

Դաշտային աշխատանքների ընթացքում առվույտի և հացահատիկների խնամքի ոչ բերքահավաքի համար նա օգակներին նշանակեց անհրաժեշտ թվով կոլխոզիկներ: Այդ հարցում ընկ. Լաչինյանը ցուցաբերեց մեծ հմտութիւն: Առվույտի և հացահատիկների վրա աշխատում էին այն օգակների կոլխոզիկները, որոնք հաջողութեամբ և իր ժամանակին ավարտում էին իրենց ամրացրած հողամասերի աշխատանքները: Հետևապես լավագույն օգակներն ու այդ օգակներին անդամներն առավելութիւն էին ստանում աշխատել նաև ուրիշ կուլտուրաների վրա, վաստակել ավելի շատ աշխօրեր, ուստի և ստանալ ավելի շատ եկամուտ:

Բոլորովին այլ դրութիւն կարող էր ստեղծվել, եթե բրիգադիւրը, հաշվի չառնելով այն հանգամանքը, թե կատարել է արդյոք օգակն իր հողամասի առաջադրանքները, թե ոչ, նրան պարտավորեցնէր աշխատանքի անցնել հացահատիկների կամ

առվույտի դաշտում: Բրիգադիլը Երիզայիսի «դեկավարութունը» անխուսափելիորեն դարձյալ դիմադրելութուն և գյուղատնտեսական աշխատանքների որակի վատացում կառավարելու:

Այդպես ուրեմն, կենտրոնացված ձևով օգտագործման համար Լաչինյանի բրիգադայի տրամադրության տակ թողնվեցին կենդանի քաղող ու ժը, տրանսպորտը և գյուղատնտեսական ձիաքարը գործիքները:

Օղակներն այդ դեպքում չդարձան բրիգադայի պատճենը, այլ մնացին բրիգադայի օրգանական բաղադրիչ մասը, որը ոչ միայն չի հակադրվում ամբողջությանը, այլև ղեկ ամրապնդում է այն: Օղակը, բամբակագործական կոլխոզի պայմաններում, դարձավ բրիգադայի բանուժի դասավորման այն ռացիոնալ ձևվը, որն ապահովում է բամբակենու, խորզենու և բանջարանոցային կուլտուրաների մշակության աշխատանքների բարձրորակ կատարումը: Այդպես լուծվեց մշտական օղակների վրա հիմնված բրիգադայի աշխատանքի կարևոր հարցերից մեկը, այսինքն՝ բրիգադայի և օղակի արտադրական փոխհարաբերությունների հարցը բամբակագործական կոլխոզում:

Հաջորդ, ոչ պակաս կարևոր խնդիրն էր հանգիստանում յուրաքանչյուր օղակին մշտական հողամաս պարագլուխը, այն հաշվով, որ ձեռք բերվեց ամբողջ արտադրական պրոցեսի համաձայնեցված կերպով օղակում և բրիգադայում, այնպես որ օղակների բոլոր կոլխոզնիկները ծանրաբեռնված լինելին միաժամանակ և հավասարաչափ:

Երրորդ Խնտերնացիոնալի անվան կոլխոզի փորձը խոսում էր այն մասին, որ «բուքսիրի» օգնությամբ «խմբով» աշխատելու վաղուց դատարարված ձևի հիմնական պատճառը օղակային հողամասերի ոչ ճիշտ առանձնացումն է հանդիսանում:

Հին ձևը կիրառելիս՝ օղակին հողամաս էր առանձնացվում դաշտերի երկայնքով, ուրիշ խոսքով տասած՝ բամբակենու շարքերի երկարությամբ: Դրա հետևանքն այն էր լինում, որ օղակին ամրացված բամբակի ամբողջ տարածությունը միաժամանակ էր ջրվում: Միանգամայն բնական է, որ օղակը, ունենալով սահմանափակ թվով բանվորական ձեռք, աշխատանքի ամենալարված ժամանակ չէր հասցնում մշակել իր հողամասը ջրելուց հետո,

ները նրան ամբացված ամբողջ հողամասը հասունանում էր՝ այս կամ այն ագրոձեռնարկումը կատարելու համար:

Դրությունը փրկելու և ժամանակին միջշարքային փխրեցում կատարելու համար բրիգադիրը ստիպված էր լինում բոլոր օղակները փոխադրել այն օղակի հողամասը, որը ջրվել է մյուսներից առաջ: Այդ հանգամանքն առաջացնում էր կոլխոզնիկներին ուժի ջլատում, ցածրացնում էր օղակավարի պատասխանատվությունը իր օղակի աշխատանքներում և այդպիսով իրականում առաջ բերում լիակատար դիմադրկություն:

Առաջավոր բամբակագործների փորձը ցույց է տալիս, որ մեծ տարածությունների, հատկապես շատ երկար հողակտորների վրա, օղակային հողամասերի առանձնացումը պետք է կատարել ոչ թե շարքերի երկայնությամբ, այլ լայնությամբ: Այդ միջոցառումը հնարավորություն է տալիս բրիգադայում իրագործել աշխատանքի կազմակերպման խիստ օղակային սխեման: Այդ դեպքում ջրովի խոշոր մասսիվները վրա բրիգադայի բամբակի բոլոր դաշտերը բաժանվում են ըստ նրանց լայնության և ըստ օղակների, որի հետևանքով և բրիգադայի բոլոր օղակներին բամբակի հողամասերը ջրվում են միաժամանակ: Իսկ որովհետև այդ դեպքում յուրաքանչյուր օղակի ջրված հողակտորը մեծ չի լինում, օղակների համար հնարավորություն է ստեղծվում այդ հողակտորի մշակումը «քեշի» դալուց հետո կատարել սեփական ուժերով: Այդպիսով բրիգադայի յուրաքանչյուր օղակավար ամբողջովին պատասխանատու է դառնում իր օղակի աշխատանքի և իր հողամասի բամբակենու վիճակի համար:

Այդ աշխատանքի կատարումով ձեռք է բերվում ոչ միայն դիմադրկության վերացում, այլև տրակտորային, ձիու և ձեռքի աշխատանքի ճիշտ դուգակցում կոլխոզում:

Բրիգադիր Լաչինյանը և օղակավար Դոլոդյանը քիչ ուշադրություն չէին դարձնում ինչպես այս հարցի, այնպես և օղակի բանվորական կազմի ճիշտ որոշման վրա:

Առաջավոր օղակներին փորձն ասում է այն, որ ութ հոգուց բաղկացած օղակը ի վիճակի է ժամանակին ապահովելու ջրման, կուլտիվացիայի, փխրեցման և բերքահավաքի աշխատանքներն իրեն ամբողջված 8—9 հեկտար պլանտացիայի վրա, եթե հիմք

է ընդունւում այն, որ ցանքերի մշակման մեկ ցիկլը շարունակւում է 5—6 օր:

Անցյալի փորձը ցույց է տվել, որ ավելի փոքր օղակների կաղմակերպումը, բաղկացած 3—4 հոգուց, չի արգարացնում իրեն: Մանր օղակները կենսունակ չեն, քանի որ նրանք չեն ապահովում իրենց ամրացված հողամասերի վրա տարվող աշխատանքների ամբողջ կոմպլեքսի ճիշտ և ժամանակին կիրառումը: Օղակում քիչ թվով մարդիկ լինելու դեպքում հաճախ միևնույն կոլտոգնիկը ստիպված է լինում օրական մի քանի տարբեր աշխատանքներ կատարել, որն ինքնին խափանում է անհատական կամ փոքր խմբակային գործարքի սկզբունքը օղակում և զրանով իսկ ստեղծում դժմագրկութուն աշխատանքում:

15—17 հոգուց բաղկացած ավելի խոշոր օղակները նույնպես չեն արդարացրել իրենց գործնականում: Այդպիսի օղակները իրականում վեր են ածվել բրիգադաների: Նման օղակներում օղակավարն օղակի անդամների հետ միասին հավասարաչափ մասնակցելով աշխատանքներին, ի վիճակի չի լինում ղեկավարել օղակը և աշխատանքի ընթացքում ստուգել օղակի յուրաքանչյուր անդամի կատարած առաջադրանքի քանակն ու որակը: Այդ պատճառով էլ աշխատանքի որակն այդպիսի մեծածավալ օղակներում միշտ ցածր է լինում:

Ահա թե ինչու Քոլոդյանի օղակը և Լաչինյանի բրիգադայի ուրիշ օղակները կաղմված էին 8—10 հոգուց, այսինքն՝ ունեին այնպիսի կազմ, որն ապահովում է աշխատանքի լավ կաղմակերպումը և կատարվող աշխատանքների բարձր որակն անհատական և խմբակային գործարքի կիրառման պայմաններում:

Խիստ կարևոր է նաև ապահովել մարդկանց ճիշտ ընտրութունը օղակում: Հոկտեմբերիկ Քոլոդյանն առանձին ուշադրութուն էր դարձրել իր օղակի կոմպլեկտավորմանը: Նրա ընտրած օղակի բոլոր անդամներն աշխատում էին նրա հետ արդեն մի քանի տարի: Նա գիտեր նրանց յուրաքանչյուրի ընդունակութունները և հնարավորութունները ու աշխատում էր այնպես անել, որպեսզի իր օղակում լինեին օղակին ամրացված հողամասին լավ ծանոթ մարդիկ, այնպիսի փորձված բամբակագործներ, որոնք լավ իմանային բամբակենու խնամքի բոլոր առանձնա-

հատկութիւնները և տիրապետին բաժրակի բերքահավաքի ար-
վեստին:

Բոլոր ասածները վկայում են այն մասին, որ Քրիստոսյանի
օղակում ստեղծվել էին գործարքի ամենաառաջադեմ ձևի, այն
է՝ անհատական գործարքի լայն կիրառման բոլոր պայմանները:
Անհատական գործարքը հնարավորութիւն տվեց օղակում ար-
մատապես ոչնչացնել աշխատանքի կադմակերպման դիմադրկու-
թյան բոլոր հետքերն ու եկամուտների բաշխման հավասարե-
ցումը:

Բաժրակներու նոսրացման, փխրեցման և բերքահավաքի աշ-
խատանքների ժամանակ օղակի ամբողջ աշխատանքը կատար-
վում էր բացառապես անհատական գործարքի հիման վրա: Այդ
նպատակով օղակի հողամասը գյուղատնտեսական ամբողջ սեզո-
նի ընթացքում բաժանված էր մասերի և ամբացված յուրաքան-
չյուր կոլխոզնիկի:

Սակայն այդ չի նշանակում, որ Քրիստոսյանը, ստեղծելով
շահագրգռվածութիւն կոլխոզների կողմից արտադրական առա-
ջադրանքները կատարելու գծով, կարող էր հանգստանալ և ինք-
նահոսի մատնել ցանքերի մշակումը: Անհատական գործարքը
կարող է հաջողութիւն ունենալ և իսկապես հաջողութիւն ունի
միայն այնտեղ, որտեղ նա զարգանում է բրիգադայի, օլակի
քաղայի վրա, որտեղ կոլխոզնիկները, կատարելով իրենց աշխա-
տանքն անհատական կարգով, ամենասերտ կերպով կապված են
բրիգադայի, օղակի հետ:

Քրիստոսյանը խիստ հսկողութիւն սահմանեց օղակի անդամ-
ների օրական առաջադրանքի կատարման վրա: Այդ առաջա-
դրանքները յուրաքանչյուր կոլխոզնիկ ստանում էր նախորդ
օրը: Ամեն օր աշխատանքից հետո օղակավարը օղակի անդամնե-
րի կարճ խորհրդակցութիւն էր հրավիրում աշխատանքային օր-
վա արդշունքները քննելու համար: Այդտեղ էր մշակվում և հա-
ջորդ օրվա աշխատանքի պլանը:

Քրիստոսյանը գրեթե ամեն օր քննում էր իր պլանները
ՄՏԿայանի գյուղատնտեսի և բրիգադիւրի հետ, ստանալով
նրանցից արժեքավոր ցուցմունքներ հետագա աշխատանքների
համար:

Անհատական և մասնր խմբակային գործարքի կիրառումը հսկայական նշանակություն ունեցավ օդակի աշխատանքի արտադրողականության բարձրացման գործում՝ սոցիալիստական մրցություն հիման վրա թե օդակի ներսում և թե նրա ու հրկերորդ բրիգադայի մյուս օդակներին միջև:

Այդ բանում համոզվելու համար բավական է բերել նույն օդակի մեկ կոլտոշնիկի օրվա աշխատանքի արտադրանքի մի քանի միջին ցուցանիշներ:

Աղյուսակ № 1

Աշխատանքի տեսակը	Արտադրանքի նորման կոլտոշնիկի վրա	Փաստացի կատարողականը	Սահմանված նորմաների դեբախտարումը տոկոսով
1. Առաջին միջաբեային փերեցում	0,08 հեկտ.	0,15 հեկտ.	90,0
2. Բամբակի հետագա փերեցումները	0,15 »	0,23 »	53,0
3. Բամբակի առաջին նստրացումը	0,2 »	0,25 »	26,0
4. Բամբակի բերքահավաքը կենդուղների մաստայական բացման ժամանակ	62 կգ.	85 կգ.	42,0

Աշխատանքի արտադրողականության բարձրացման համար բացառիկ նշանակություն ունի կոլտոշնիկի նյութական շահագրգռվածությունը աշխատանքի արդյունքների նկատմամբ: Սոցիալիզմի սկզբունքը պահանջում է վարձատրել ըստ աշխատանքի:

Նա, ով հասարակությանը տալիս է ավելի շատ աշխատանք, ով աշխատում է ավելի լավ, ով կատարում է ավելի բարդ կամ ծանր աշխատանք, պետք է ստանա ավելի շատ նյութական բարիք: Իսկ որպեսզի այս սկզբունքը անշեղորեն կենսագործվի, անհրաժեշտ է համառորեն պայքարել աշխատանքի ճշգրիտ հաշվառման համար, ըստ նրա քանակի և որակի:

Աշխատանքի կազմակերպման ընաղավառում օդակավար Գոլոյանի արժանիքը կայանում էր նաև նրանում, որ նա միան-

գլխաւոր հասկումն էր աշխատանքի ձիւտ հաշիւառման նշանակութեան կարեւորութիւնը՝ որպէս գլխավոր խթաններից մեկը աշխատանքի արտադրողականութեան բարձրացման գործում:

Յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում ընկ. Քոլոզյանը հաշիւի էր առնում օղակի ամեն մեկ անդամի՝ նախորդ օրը ստացած արտադրական առաջադրանքի կատարումը:

Հաջորդ օրվա առաջադրանքը ստանալիս, օղակի անդամների գրքույկներում միաժամանակ գրանցվում էին օրվա աշխատանքի արդիւնքները. այդտեղ նշվում էին նաև կատարված աշխատանքների քանակն ու որակը և այդ աշխատանքի համար հասանելիք աշխօրերը: Հաշիւառման այդպիսի դրվածքը կոլխոզնիկներին համոզուեց էր ներշնչում այն մասին, որ նրա աշխատանքը չի կորչում, ամբողջովին հաշիւի է առնվում և գնահատվում ըստ արժանիւթի, որ օղակի յուրաքանչյուր անդամի աշխատանքը չի դիմադրկվում և արտահայտվելու է կատարած գործի վերջնական արդիւնքներում:

Իր օղակում աշխատանքի արտադրողականութիւնը բարձրացնելու համար ընկ. Քոլոզյանը չբավարարվեց միայն դիմադրկութեան վերացումով, որին նա հասաւ անհատական և մանր խմբակային գործարքի կիրառումով և աշխատանքի ձիւտ հաշիւառում սահմանելով:

Աշխատանքի ինտենսիվութիւնը բարձրացնելու նպատակով ընկ. Քոլոզյանն իր օղակում մտցրեց աշխատանքային օրվա խիստ կարգ ու կանոն, սահմանելով աշխատանքն սկսելու և վերջացնելու կայուն ժամկետներ և ընդմիջում հանգստի համար:

Այդ գործում Քոլոզյանի օղակին մեծ աջակցութիւն ցույց տվեց կոլխոզի վարչութիւնը՝ հանձինս նրա նախագահ ընկ. Ալեքսանի և քրիզագիր Լաչինյանի, որոնք լավ կազմակերպեցին կոլխոզնիկների հասարակական սնունդը դաշտում և մանկամուրեքների աշխատանքը:

Համաձայն ընկ. Քոլոզյանի սահմանած օրվա կարգի, աշխատանքն օղակում սկսվում էր ամեն օր առավոտյան ժամը 6-ից և վերջանում էր երեկոյան ժամը 8-ին:

Սակայն բանը միայն նրանում չի, որ աշխատանքը սկսելու և ավարտելու կայուն ժամկետներ սահմանվեն: Այդ ժամկետները այն դեպքում միայն կարող են իրենց նպատակին հաս-

նել, եթե աշխատանքի ժամերն օգտագործվում են առավելապես խտացած կերպով: Իսկ դրան կարելի է հասնել միայն այն դեպքում, եթե օդակում ստեղծված են հետեյալ պայմանները.

1. Երբ օդակի յուրաքանչյուր անդամ արդեն նախորդ օրվանից զիտե իր օդական արտադրական առաջադրանքը, զիտե այն հողամասը, որտեղ նա պետք է իրականացնի այդ առաջադրանքը և սարքին վիճակում ունի արտադրության այն բոլոր միջոցները (գյուղատնտեսական մեքենաներ, ձեռքի ինվենտար), որոնց օժանդակությամբ նա պետք է կատարի այդ առաջադրանքը:

2. Երբ լավ և խելացիորեն է կազմակերպված կոլխոզնիկները հանգիստը աշխատանքային օրվա պրոցեսում:

Ընկ. Քոլոզյանի օդակում առաջին պայմանը շատ լավ էր կատարվում, որի մասին մենք արդեն գիտենք նախորդ շաբաթից:

Այժմ պատմենք, թե ինչպես էր կատարվում երկրորդ պայմանը: Այստեղ խնդիրը նրանում է, որ կրճատելով հանգստի համար հատկացված ժամանակը, ֆիզիկապես ավելորդ չծանրաբեռնել կոլխոզնիկներին, այլ այդ կրճատմանը հասնել բացառապես հանգստի կարգավորման միջոցով:

Այդ խնդիրը ընկ. Քոլոզյանը լուծեց նրանով, որ աշխատանքային օրվա ընթացքում փոխանակ շատ երկար, բայց ավելի սակավաթիվ ընդմիջումների, սահմանեց հանգստի կարճատև ընդմիջումներ, յուրաքանչյուր երկու ժամը մեկ անգամ: Օրվա կեսին ընդմիջումն ավելի երկար էր լինում—մեկ ու կես ժամ: Վերջին հաշվով, օրվա ընթացքում օդակի հանգիստը կազմում էր 3 ժամ, մինչդեռ վատ կազմակերպված օդակներում հանգստի տեղում լինում էր ոչ պակաս 4,5—5 ժամի:

Պետք է ասել, որ այդ միջոցառման արդյունքը շատ բարձր եղավ: Օդակի անդամները ամբողջ օրվա ընթացքում միշտ էլ իրենց շատ առույգ էին զգում, չէին հոգնում և ամբողջ աշխատանքն առավոտից մինչև ուշ երեկո կատարում էին մեծ խելացիությամբ:

Հաշվարկումները ցույց են տալիս, որ միջին հաշվով աշխատանքի ընթացքում օդակում պարապուրդի վրա ծախսվեց ժամանակի 5 տոկոսը: Հանգստի հետ միասին, ոչ-աշխատանքային

Ժամերն ամեն օր կազմեցին միջին հաշվով 27 տոկոս: Հետևապես, խտացնելով իր աշխատանքային օրը, Բոլոզյանի օդակը ձեռք բերեց այնպիսի դրուժյուն, երբ ղուտ աշխատանքի վրա դնում էր աշխատանքային օրվա 73 տոկոսը, մինչդեռ մյուս կոլխոզնիկները օգտագործում էին միայն 60 տոկոսը:

Այդպես էր կոլխոզնիկների աշխատանքի արտադրողականության բարձրացման նաև այս մեկ միջոցառման արդյունքը:

Համկ(ը)Պ կկ. ի 1947 թ. փետրվարյան պլենումի պատմական որոշման մեջ նշվում է, որ կոլխոզներում աշխատանքի արտադրողականության բարձրացման թափը խթանող խիստ էական միջոցառումներից մեկը հանդիսանում է աշխատանքի լրացուցիչ վարձատրությունը կոլխոզնիկներին՝ դյուրատնտեսական կուլտուրաների բերքատվության բարձրացման, անասունների գլխաքանակի աճեցման և նրա մթերատվության բարձրացման համար:

Շատ կոլխոզներում լրացուցիչ վարձատրության կադմակերպմանը արգելք է հանդիսանում աշխատանքի և բերքի հաշվառման վատ դրվածքը բրիգադաներում և օղակներում: Բրիգադայի կամ օղակի հավաքած բերքի անշատ հաշվառման բացակայության դեպքում դիմադրկվում է լավ աշխատող բրիգադաների և օղակների աշխատանքը և կոլխոզնիկները զրկվում են լրացուցիչ վարձատրություն ստանալու հնարավորությունից:

Այդպիսի դրություն չէր կարող տեղի ունենալ ընկ. Բոլոզյանի օդակում, քանի որ մենք արդեն գիտենք, թե որքան ճիշտ էր դրված աշխատանքի հաշվառումն այդ օդակում: Նույնպիսի պարզորոշութամբ էր դրված նաև օղակի կողմից հանձնվող բամբակի հումքի բերքի հաշվառումը: Ամեն անգամ հավաքված բամբակը հանձնելիս՝ ընկ. Բոլոզյանը տեղն ու տեղը կոլխոզի ընդունող-տեսակավորողից ստանում էր սահմանված ձևի ստացական, որտեղ, բացի քանակից, մանրամասն ցույց էր տրվում նաև հումքի որակը և հանձնման օրը:

Աշխատանքի և ստացված բերքի հաշվառման պարզորոշ դրվածքն օդակին հնարավորություն տվեց յուրաքանչյուր անգամին տալ լրացուցիչ վարձատրություն բերքատվության բարձրացման համար: Դրա հետևանքով օդակի կոլխոզնիկները եկամուտը բարձրացավ գրեթե 50 տոկոսով:

Քոլոդյանի օղակի աշխատանքը՝ կոլխոզային եկամուտներն ըստ աշխատանքի քանակի և որակի բաշխելու սոցիալիստական սկզբունքի ճիշտ իրականացման փայլուն օրինակ է հանդիսանում: Օղակի աշխատանքի փորձը ցույց է տալիս նաև, թե ինչպես պետք է բարձրացնել կոլխոզնիկի նյութական շահագրգռվածությունը իր իսկ աշխատանքի արդյունքով, որը հիմք է ծառայում կոլխոզային շինարարության հետագա ամրապնդման և կոլխոզնիկների ունևորության աճի համար տարվող պայքարում:

Հետպատերազմյան ստալինյան նոր հնգամյակի տարիներում, երբ ամենակարճ ժամկետներում անհրաժեշտ է իրագործել մեր հայրենիքի ժողովրդական տնտեսության ընդոր ճյուղերի վերականգնման ու հետագա զարգացման վիթխարի աշխատանքները, աշխատանքային աեսուրսների խնայողաբար ծախսումը և միաժամանակ դաշտերի խնամքով մշակումը առանձնապես կարևոր նշանակություն է ստանում:

Աշխատանքային աեսուրսների ամենախնայողաբար և ռացիոնալ օգտագործման միջոցով ապահովել ցանքերի լավագույն խնամքը և հասնել ամենաբարձր նյութական էֆեկտի,—այդ է այսօրվա մեր կարևորագույն խնդիրներից մեկը:

Ընկեր Քոլոդյանի օղակը գործնականում ապացուցեց այդ խնդրի հաջող լուծման լրակատար հնարավորությունը: Օղակը բամբակի մեկ հեկտարի վրա (հաշվի առնելով տրակտորիստներին, ձիապաններին, խոհարարին և ուրիշներին տրված աշխօրերը) ծախսել է ընդամենը 200 աշխօր, իսկ հավաքված բամբակի հումքի յուրաքանչյուր ցենտների վրա (հաշվելով 3 հեկտարից 85,1-ական ցենտներ, իսկ 6,5 հեկտարից 25,3-ական ցենտներ)—4,5 աշխօր, մինչդեռ աեսուրսը իր կայում միջին հաշվով այդ ցուցանիշները կազմում են համապատասխանորեն՝ 160 աշխօր և 17 աշխօր:

Այս ցուցանիշները հենց իրենք խոսում են իրենց մասին և չեն պահանջում լրացուցիչ մեկնաբանությունների:

Այդպիսիք են աշխատանքի ճիշտ կազմակերպման արդյունքները Քոլոդյանի օղակում:

Մենք տվյալ գլխի համար օրինակ բերեցինք այս օղակը, որտեղ աշխատանքը ամենից ավելի ռացիոնալ կերպով էր կազմակերպված:

Մեր կողմից ուսումնասիրված Մելիքյանի և Քոչարյանի օղակները նույնպես հաջողութեամբ են կազմակերպել իրենց աշխատանքը: Սակայն մենք բավարարվում ենք Գոյոզյանի օղակի օրինակով, ընդունելով այն որպես ամենից ավելի տիպիկը և լավագույնը:

3. ՈՐՈՆՔ ԵՆ ՍՏԱՆԱՆՈՎՅԱՆ ԱԳՐՈՏԵԽՆԻԿԱՅԻ ԳԼԽԱՎՈՐ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Աշխատանքի լավ կազմակերպման գեպըում, երբ կոլխոզնիկը տեսնում է իր աշխատանքի արդյունքը, համոզվում է, որ այդ աշխատանքը արժանիորեն գնահատված է, իսկ իր մշակած դաշտի բերքատվությունը, շնորհիվ իր իսկ ներդրած աշխատանքի, խիստ բարձրացել է, նրա մեջ դարգանում են սոցիալիզմի ժամանակաշրջանի մարդու բոլոր լավագույն հատկանիշները — ազնիվ վերաբերմունք դեպի կոլխոզային աշխատանքը և հասարակական սեփականությունը, բուլլեիկյան հոգատարություն կոլխոզային բերքի հանդեպ, բանիմացություն, նախաձեռնություն և անհողողդ կամք՝ առաջադրված նպատակին հասնելու համար: Այն կոլխոզները, որոնք անհրաժեշտ պայմաններ են ստեղծում կոլխոզնիկների աշխատանքի համար, նրանք մարդկանց դաստիարակում են այսպիսի հատկություններով, իսկ այդպիսի մարդկանց շարքից է, որ հանդես են գալիս սոցիալիստական հոգադրություն ստանալովականները:

Նա, ով չգիտե ստանալովականների այդ հատկությունների մասին, լինի նա շարքային կոլխոզնիկ, կամ մեծ գիտնական, միշտ էլ տարակուսում է, թե ինչպես է, որ ստանալովականները հնարք են գտնում ստանալու այդպիսի չլաված բարձր բերք: Հաճախ այդ ուղիները վերագրում են պատահականության, հողի լավություն և այլն: Իրականում այդ այդպես չէ:

Այս նվաճումները ստանալովականներին կողմից հոգադրություն հիմնական օրենքների նշանակալի պահանջման հետևանք են հանդիսանում:

«Միայն կյանքի օրենքներն ուսումնասիրելով, միայն դիտելով կամ քննարկելով, թե ինչ ուղիներով է բույսը հասել իր նպատակներին, մենք ի վիճակի կլինենք ուղղել նրա զորու-

նեռությունը դեպի մեր օգուտը, ստիպելով նրան տալ ինչքան կարելի է շատ, հնարավոր եղածին չափ լավ որակի արտադրանք»։ Այսպես է ասել ուսմ մեծ գիտնական Կ. Ա. Տիմիրյազևը¹։

Ուրեմն ստախանովականների «գաղտնիքը» միանգամայն պարզ է։ Նա մատչելի է միլիոնավոր կոլխոզնիկներին համար։ Նա չի պահանջում ոչ կապիտալ ներդրումներ, ոչ գերընդունակ մարդիկ։ Դրանում է ստախանովյան շարժման վիթխարի ուժն ու առավելութունը ընդհանրապես, իսկ գյուղատնտեսության մեջ մասնավորապես։

Պայքարի զուրս գալով հանուն բամբակենու բարձր բերքի, մեր կողմից ուսումնասիրված ստախանովական օղակները նաև և առաջ իրենց առաջ խնդիր դրեցին յուրացնել արտադրության տեխնիկան, խորր ուսումնասիրել բամբակենու ագրոտեխնիկան։ Ամբողջ ձմեռային շրջանում և գյուղատնտեսական սեզոնի ազատ ժամերին նրանք համառ կերպով աշխատում էին իրենց վրա, կարգում էին գրականություն բամբակագործության մասին, ուսումնասիրում էին երկրում հայտնի դարձած հարյուրցենտեհրականների փորձը, ամեն օր հետևում էին գիտության և ստախանովականների նվաճումներին։

Դրա հետևանքով օղակավարներ Դոլոգյանը, Մելիքյանը և Դոչաբյանը լավ յուրացրին բույսերի կյանքի օրենքները, բամբակենու զարգացման առանձնահատկությունները, հողի մշակման եղանակները և բամբակի բույսի խնամքը։ Ստախանովականներն ուսումնասիրում էին հողագործության օրենքները նաև իրենց հողամասերում, ուշադիր հետևելով բամբակենու զարգացման պայմաններին։ Ունենալով բավականաչափ ագրոտեխնիկական գիտելիքներ, ստեղծագործականորեն յուրացնելով այդ գիտելիքները, ստախանովականները պայքարը բարձր բերքի համար տարան՝ առավելագույն և լավագույն չափով օգտագործելով այն բոլոր գործոնները, որոնցով պայմանավորվում է բերքը։

Որպեսզի բույսերն ապահովվեն աճի և զարգացման բոլոր կենսական գործոններով և այդ հիման վրա տան բարձր բերք, ստախանովականները կիրառում էին ագրոտեխնիկական միջոցա-

¹ Տիմիրյազև, Բույսի կյանքը, էջ 54, հրատ. 1938 թ., ուսուերին լեզվով։

ռումբների ամբողջ սխտեմը կամ զիտականորեն հիմնավորված կոմպլեքսը:

Ստախանովականները ապացուցեցին, որ այդ կոմպլեքսում բոլոր միջոցառումները միատեսակ կարևոր են բարձր և կայուն բերք ստանալու համար և որ նրանցից զեթ մեկի բացակայությունը կոմպլեքսում իջեցնում է բերքատվությունը:

Ստախանովականների պրակտիկան փայլուն կերպով հաստատում է Վ. Ռ. Վիլյամսի այն ասածը, որ «բույսերի կյանքի բոլոր գործոններն անալոգիանորեն հավասարազոր են»¹:

Բույսերի կյանքի այդպիսի գործոններ չեն հանդիսանում սննդանյութերը, ջուրը, լույսը և ջերմությունը:

Կիրառելով ագրոտեխնիկական ամբողջ կոմպլեքսը, ստախանովականները ուժեղացնում էին վերը հիշված բոլոր գործոնների օգտագործումը բամբակենու նկատմամբ: Նրանք հիանալի կերպով հասկացան, որ ապահովելով բամբակենին միայն մի գործոնով, դիցուք ջրով, չի կարելի հողում փոխարինել, ասենք, սննդարար նյութերի պակասն ուրիշ նյութերով: Որքան էլ և ինչպես էլ ճիշտ ջրվի բամբակենին, բայց եթե հողը ուժասպառ է եղած և նրանում բացակայում է բույսերի համար անհրաժեշտ սնունդը, ապա այդ բամբակի դաշտից չի կարելի բարձր բերք ստանալ: Նույնքան ճիշտ է նաև հակառակ օրինակը: Զրի պակասը չի կարելի փոխարինել պարարտացուցով: Կարելի է հողին տալ ամենամաքսիմալ քանակությամբ դանդաղ սննդարար նյութեր, օրինակ՝ ազոտ, ֆոսֆոր, կալիում: Սակայն եթե դրա հետ միասին բույսերը անհրաժեշտ քանակությամբ ջուր չստանան, այդ պարարտանյութերը օգուտ չեն բերի, կիչանան և՛ բերքը և՛ պարարտանյութերը, ինչպես և այն աշխատանքը, որը ծախսվել է նրանց վրա: Դեռ ավելին: Եթե հողում բույսի սննդի տարրերից պակասում է թեկուզ մեկը, նրան սննդի ուրիշ տարրերով փոխարինելը նույնպես ոչ մի օգուտ չի տա: Զի կարելի, օրինակ, ազոտը փոխարինել կալիումով և այլն:

Ուստի և բույսի զարգացմանը նպաստող գործոններից մեկի, օրինակ սննդի ավելացման հետ՝ բերքատվության բարձ-

¹ Վ. իլլամս, Հողագիտություն, էջ 21—22, հրատ. 1938 թ., Խուսերեն լեզվով:

բացման համար անհրաժեշտ է միաժամանակ ավելացնել նաև բուլսի կյանքի մնացած այն բոլոր գործոնները, որոնք գտնվում են փոքր քանակությամբ:

Բուլսերի ճիշտ սնուցումը ապահովելու համար, մեր ստախանովականները հողը պարարտացրին հանքային և օրգանական պարարտանյութերով դեռևս աշնանից սկսած: Այնուհետև նրանք այդ բանը կրկնեցին վաղ գարնանը ցրտահերկը կրկին վարելու ժամանակ: Բացի դրանից, բաժրակը խնամելու ժամանակաշրջանում մի քանի անգամ օժանդակ սնունդ տվին:

Բամբակենու ցանքերը բավականաչափ ջրով ապահովելու համար, ստախանովականները մշակեցին ցանքերի ջրման հատուկ սխտեմ, ելնելով իրենց դաշտերի հողային պայմաններից:

Նրանք իրենց նպատակներին ի սպաս դրեցին նաև օդերի վնասարանական պայմաններն ու արեգակի էներգիան, որոնք առաջին հայացքից դժվար են ենթարկվում մարդուն: Սակայն ստախանովականներն այստեղ էլ ելք գտան, այն է՝ բամբակը ցանել ամենաբարենպաստ և սեղմ ժամկետներում, որոշել բամբակենու ցանքի նորմալ խտությունը, ժամանակին կատարել ցանքերի կուլտիվացիան և փերեցումը, ընտրել բերքահավաքի ամենալավ ժամկետները և կատարել այն առավելագույն սեղմ ժամանակամիջոցում: Ահա այն միջոցառումները, որոնցով ստախանովականները հասան լույսի և ջերմության գործոնների ճիշտ օգտագործմանը:

Ատախանովականների աշխատանքի առանձնահատկությունը հանդիսանում էր նաև այն, որ ագրոտեխնիկական միջոցառումների կոմպլեքսի կիրառումը նրանք կատարեցին ոչ թե շարունակ, այլ հաշվի առնելով իրենց օդակներին ամրացրած հողերի առանձնահատկությունները: Այսպես, օդակավար Մելիքյանը, որի հողածառուց ցանված նախորդ բուլսը եղել էր առվույտը (որը, ինչպես հայտնի է, հողը հարստացնում է ազոտով), ցրտահերկի ժամանակ զարկ տվեց հողամասը ֆոսֆորով պարարտացնելու գործին, գիտենալով, որ առվույտը հողից վերցնում է այդ սննդանյութից բավականաչափ մեծ քանակություն:

Օդակավարներ Բոլոզյանը և Բոչարյանը, որոնց հողամասերի նախորդող բուլսը եղել էր բամբակը, այլ կերպ վարվեցին, նրանք իրենց դաշտերը պարարտացրին հավասար քանակությամբ

ազդուող և ֆոսֆորով: Այս օրինակը վկայում է դեֆերենցիած ազդրոտեխնիկայի մասին, որը կիրառվում է միջավայրի կոնկրետ պայմաններում:

Ստախանովականների ազդրոտեխնիկայի հետևյալ առանձնահատկությունը հանդիսանում է նրա ճկունությունը, դյուրաշարժությունը:

Բերենք օրինակ: Օդակավարներ Քոչարյանի և Մելիքյանի հողամասերը մայիսի 13-ին չափազանց զնառվեցին կարկուտից: Այդ բնական աղետի հետևանքով դաշտում բույսերի 25—30 տոկոսը ոչնչացավ: Մի ուրիշը կարող էր անմիջապես հուսահատվել: Բայց այդպիսիք չէին ստախանովականները:

Ներու օդակավարներն իսկույն ևեթ ձեռնարկեցին աղետի հետևանքները վերացնելու գործին, համառ պայքար ծավալելով իրենց հողամասի բույսերի խտությունը վերականգնելու համար: Փչացած ծիրերի տեղում շտապ կարգով ցանք կատարեցին ծլեցրած սերմերով, միջարքերի և միջնային փերեցումի հաջորդումով: Հետագայում այդ բույսերի վրա առանձին խնամք տարվեց և շատ կարճ ժամանակից հետո դրությունն ամբողջովին վերականգնվեց: Այս օրինակով ոչ միայն կարելի է համոզվել ստախանովական ազդրոտեխնիկայի ճկունության և դյուրաշարժության մեջ, այլև այն բանում, թե ինչպես անհողդող կամքով ստախանովականները, ինչ գնով էլ լինի, աշխատում են հասնել իրենց առաջ դրված նպատակին:

Այսպիսիք են ստախանովական ազդրոտեխնիկայի այն հիմնական առանձնահատկությունները, որոնց մեջ է «թաքնված» գյուղատնտեսության և մասնավորապես բամբակագործության առաջավորների բարձր բերք ստանալու գաղտնիքը:

Այդ առանձնահատկությունները պետք է մեր բոլոր կուլտուրիկների սեփականությունը դառնան: Իրենց ամբողջ հետադա աշխատանքը նրանք պետք է կառուցեն ստախանովականների աշխատանքի օրինակով:

Այժմ անցնենք այն հարցերի քննարկմանը, որոնք կազմում են բամբակենու ստախանովական ազդրոտեխնիկայի սխառմը, հիմք ընդունելով դրա համար իրեք առաջավոր օդակավարների՝ Քոլոդյան Հոկտեմբերիկի, Մելիքյան Աղափու և Քոչարյան Սիրուշի աշխատանքը:

Հիմնական միջոցառումներից մեկը, որն օժանդակում է օղակին բարձր և կայուն բերք ստանալու գործում, հանդիսանում է ագրոպլանը, որով նախատեսվում են տարեկան աշխատանքի ընդ որ մանրամասնությունները, ագրոտեխնիկական միջոցառումների ամբողջ կոմպլեքսը, սկսած հողի պատրաստումից մինչև բերքահավաքը, այսինքն՝

1. Յրտահերկի ժամկետներն ու խորությունը:
2. Յրտահերկի ժամանակ հանքային և տեղական պարարտանյութերի մոցման նորմաներն ու ժամկետները:
3. Բազմաձյա մուլախոտերի հավաքումն ու այրումը ցրտահերկից հետո:
4. Տեղական պարարտանյութերի կուտակումն ու պահպանումը ձմռան ընթացքում, սահմանելով նրանց ընդհանուր քանակը մեկ հեկտարի համար ընդունված նորմայի հաշվով:
5. Գարնանային աշխատանքների համար ձեռքի գործիքների ձմեռային վերանորոգման օրացույցային ժամկետները:
6. Գարնանային կրկնավարի ժամկետներն ու խորությունը:
7. Հողի նախացանքային մշակման եղանակները (գարնանավար, կրկնավար, փոցխում), նրանց կատարման ժամկետները, որակային ցուցանիշները:
8. Հանքային և օրգանական պարարտանյութերը գարնանը օգտագործելու ժամկետներն ու նորմաները: Պարարտանյութերը տալու տեխնիկան:
9. Յանքի համար բամբակի սերմերի նախապատրաստման ժամկետները և ցանքի օրացույցային պլանը:
10. Բամբակի ցանքերի գարնանային և ամառային խնամքի պլանը: Պայքար հողի կեղեակավման դեմ, կուլտիվացիա, փխրեցում, նոսրացում, քաղհան, ծերատում, նրանց կիրառման ժամկետները:
11. Մնուցում հանքային և տեղական պարարտանյութերով, մնուցման ժամկետները և քանակը, մնուցում տալու եղանակներն ու նորմաները:
12. Վեգետացիոն ջրումներ, ջրումների թիվը, նրանց ժամկետները, ջրումների զուգորդությունը խոր մշակման հետ:

13. Բամբակի ֆաբրիկաների դեմ տարվող պայքարի ժամկետները: Պայքարի միջոցների (թունավոր նյութեր, զործիքներ) ապահովումը:

14. Բամբակի բերքահավաքի և փոխադրության օրացույցային պլանը:

15. Պայքար բերքի կորուստների դեմ:

Պլանի յուրաքանչյուր հատվածում նախատեսվում էր աշխատանքի կազմակերպումն օգտվում, պայքար բոլոր տեսակ աշխատանքների բարձր որակի համար և նրանց կատարումը սկզբից ժամկետներում: Պարարտանյութերը տալու պլանը կազմելու հաշվի էին առնվում հողամասերի առանձնահատկությունները: Այդ առանձնահատկություններին համապատասխան նշվում էր պարարտանյութերի այս կամ այն տեսակի կիրառումը, նրանց քանակը և այլն:

Ագրոպլանը մշակվում էր օգտակարների և օգտակար անգամների կողմից, շրջանի գյուղատնտեսի ղեկավարությամբ, որից հետո անպայման համաձայնեցվում էր բրիգադիւրի հետ: Օգտակար յուրաքանչյուր անգամ գիտեւր այդ ագրոպլանն իր բոլոր ժանրամասնություններով, իսկ պլանի իմացումը նրանց օգնում էր ժամանակին հասկանալ իրենց օգտակարների ցուցմունքները և գործ դնել բոլոր հնարավորություններն իրականում նրանց ճիշտ կենսագործման համար:

Իհարկե, այդ պլաններն աշխատանքի ընթացքում ենթարկվեցին մի շարք փոփոխությունների (ինչ որ գրեթե անխուսափելի է), բայց և այնպես նրանք մեծ ծառայություն մատուցին: Նրանք դարձան այն ուղեցույցները, որոնք օգտակարներին հնարավորություն տվին իրենց աշխատանքների ընթացքում չչեղվել նշված ուղուց՝ բարձր բերք ստանալու համար:

5. ԲԱՄԲԱԿԵՆՈՒ ԴԱՇՏԵՐԻ ՆԱԽԱՅԱՆՔԱՅԻՆ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հոկտեմբերիկ Գրողյանը իրավացի է, ասելով, որ բարձր բերքի հիմքը գրվում է աշնանը և որ ցրտահերկը «ժամանակին և լավորակ անցկացնելու գործը ապահովում է լիարժեք բերք ստանալու առաջին պայմանը»:

Բամբակի համար հողի մշակման ամենավաղ և խիստ կարևոր միջոցառումը՝ ցրտահերկը կիրառվեց ստախանովականներին

բոլոր այն երեք օղակների կողմից, որոնց աշխատանքը մենք ուսումնասիրել ենք:

Նրանք դիտեն, որ աշնանից հերկված հողում բարենպաստ պայմաններ են ստեղծվում խոնավությունն ավելի լավ պահելու համար, բարելավվում են հողի ֆիզիկո-քիմիական և բիոլոգիական հատկութայնները, և որ ձմռան ցրտերի ու խոնավության ազդեցության տակ քայքայվում են վարի ընթացքում առաջացած կոշտերը: Առաջավոր օղակների ղեկավարներին հայտնի էր նույնպես այն ազդեցությունը, որ գործում է ցրտահերկը բամբակենու ձմեռող փաստուկների ոչնչացման վրա, ինչպես նաև այն, որ ցրտահերկը թեթևացնում է գարնանային դաշտային աշխատանքների լարվածությունը:

Քոլոզյանի և Քոչարյանի օղակներում բամբակին նախորդող բույսը եղել է բամբակենին, իսկ Մելիքյանի օղակում՝ առվույտը:

Առվույտի բերքահավաքը ավարտվում է բամբակից առաջ՝ ուստի Մելիքյանի օղակը կարողացավ իր հողամասի տրակտորային վարն ապահովել հոկտեմբերի 28-ին:

Այլ կերպ է դասավորվում ցրտահերկի դործի կազմակերպումը այնտեղ, որտեղ նախքան ցրտահերկը պետք է հավաքել բամբակի բերքը: Այստեղ վտանգ կա բաց թողնել ցրտահերկի ժամկետները և հողամասերը չհերկված թողնել մինչև դարուն: Ուստի, երբ դաշտերում դեռևս հավաքում էին բամբակի բերքը, Քոլոզյանն ու Քոչարյանը ձեռնարկեցին ցրտահերկի աշխատանքներին: Դործը պետք էր կազմակերպվեր այնպես, որ կարելի լիներ ապահովել համեմատաբար վաղ ցրտահերկը, չսպասելով, ինչպես սովորաբար լինում է մյուս կոլտոզներում, որ բոլոր դաշտերից հավաքվեն բամբակի վերջին կնգուղները:

Ինչպես Քոլոզյանի, նույնպես և Քոչարյանի մոտ, օղակի մի մասը երբ բացված վերջին կնգուղներն էր հավաքում, մի ուրիշ մասը նրա հետևից հավաքում էր չբացված կնգուղները, իսկ երրորդը՝ ցողունները: Դրա հետ միաժամանակ ՄՏԿայանի տրակտորները պատրաստ էին նախապես մտածված մարշրուտով կատարել ցրտահերկը ադատված հողամասերում: Աշխատանքը տարվում էր միաժամանակ: Դրա շնորհիվ շահվեց երկու-երեք շաբաթ և ցրտահերկը կատարվեց ժամանակին: Քոչարյանի օղակը ցրտահերկին ավարտեց դեկտեմբերի 1-ին, իսկ Քոլոզյանինը՝ դեկտեմբերի 3-ին:

Ինչպես հայտնի է, բամբակի համար բացառապես խորը վար է պահանջվում: Մեր ստախանովականների հողամասերը վաղուց մշակվող, միջակ կավային մեխանիկական կազմով հողեր են: Այդ հողամասերում կարելի է կատարել խոր ցրտահերկ:

«Իմ փորձից հս գիտեմ,—ասում է Քոչարյանը,—որ խոր վարը մեծացնում է վարկաշերտի հզորությունը, հաջողությամբ ոչնչացնում է մոլախոտերը, լավացնում է հողի ջրաթափանցկությունը, նրա անբացիտն ու սննդաբար ուժիմը և լավագույն պայմաններ է ստեղծում բամբակենու արմատային սխտեմի զարգացման համար»:

Ստախանովականների հողամասերում ցրտահերկը կատարվեց. «СТЗ-НАТИ» արակտորներով 30 սմ խորությամբ:

Ցրտահերկի հետ զուգընթաց օգակներն իրենց հողամասերում կազմակերպեցին մոլախոտերի—չայիլի և զանդուերդանի ստորհերկրյա մասերի հավաքը:

Հավաքած բոլոր մոլախոտերը կիտվեցին և այրվեցին:

Բամբակենին հողից վերցնում է բավական մեծ քանակությամբ սննդանյութեր: Ինչպես ցույց են տալիս գիտահետազոտական հիմնարկները, մեկ հեկտարից 15 ցենտներ բերք ստանալու համար բամբակը հողից վերցնում է 80—90 կիլոգրամ ազոտ, 30—40 կիլոգրամ ֆոսֆոր և 50—60 կիլոգրամ կալիում:

Ստախանովական օգակների ղեկավարներ՝ Քոչարյանը, Քոչարյանը և Մելիքյանը հաշվի առան բարձր բերքի այդ պարտադիր պայմանը: Նրանք հենց աշնանից հիմնական ցրտահերկի տակ տվին զգալի քանակությամբ պարարտանյութ: Պարարտանյութը տալիս օգակավարներից յուրաքանչյուրը միաժամանակ նկատի ունեցավ իր հողամասի յուրահատուկ բնույթը: Այսպես, օգակավար Մելիքյանը նկատի էր ունեցել այն, որ իր հողամասում նախորդող բույսը եղել էր առվույտը: Իսկ առվույտը, որպես թիթեռնածաղկավորների ընտանիքին պատկանող, հանդիսանում է ազոտ հավաքող բույս և հողը հարստացնում է ազոտով: Առվույտն իր երկու տարվա գոյության ընթացքում յուրաքանչյուր հեկտարի 25 սանտիմետրանոց հողաշերտում հավաքում է 1,5—2 ցենտներ ազոտ: Ընկեր Մելիքյանը, գիտենալով այդ հանգամանքը, զարկ տվեց իր հողամասի հարստացմանը

Ֆոսֆորային պարարտանյութերով: Մեկ հեկտարին նա տվեց 500 կիլոգրամ սուպերֆոսֆատ, որը եթե վերածենք մաքուր ֆոսֆորային թթվի, կազմում է 90 կիլոգրամ: Վարը կատարելուց մեկ օր անաջ այդ պարարտանյութը հալասարապես շաղ էր տրվում և խոր ծածկվում գարնանավարով:

Այլ կերպ վարվեցին Բոլոդյանն ու Քոչարյանը, որոնց մաս բամբակի նախորդող բույսը եղել էր նույն բամբակը: Հետևապես նրանց հողամասերը աղքատ էին ոչ միայն ֆոսֆորով, այլև ազոտով ու կալիումով:

Այդ պատճառով Բոլոդյանի օղակը ցրտահերկ կատարելիս, 9,5 հեկտարին տվեց—սելիտրա 1,8 տոննա, սուպերֆոսֆատ՝ 2,7 տոննա և 190 տոննա գոմաղը ու մոխիր: Ուրիշ խոսքով՝ յուրաքանչյուր հեկտարին միայն աշնանը տվեց մինչև 70 կիլոգրամ մաքուր ազոտ, նույնքան ֆոսֆորաթթու, դրան ավելացած 20-ական տոննա տեղական պարարտանյութ:

Աշնանը պարարտանյութ տալու ուղղությամբ ավելի մեծ աշխատանք է կատարել Քոչարյանի օղակը: Իր հերք հեկտար հողամասի վրա այդ օղակը ցրտահերկի տակ տվեց 90 տոննա գոմաղը և մոխիր, 3 տոննա ցիանամիդ և 3 տոննա սուպերֆոսֆատ: Դա նշանակում է, որ յուրաքանչյուր հեկտարին միայն ցրտահերկի ընթացքում տրվել են մոտավորապես 180 կիլոգրամ ազոտ, նույնքան ֆոսֆորային թթու և 30 տոննա տեղական պարարտանյութ:

Բոլոր օղակներում պարարտանյութերը հալասար չափով շաղ էին տրվում և անմիջապես հողի տակ հերկվում:

Դեռևս աշնանից այդպես դրվեց բամբակի բարձր բերքի հիմքը:

Ոչ նվազ կարևոր ազդեցություն ունի միջոցառում է հանդիսանում ցրտահերկի վաղ գարնան փոցխումը: Վաղ գարնան փոցխումով հալասարեցվում է ցրտահերկի ալիքավոր մակերեսը, որով նվազում է հողի գոլորշիացնող մակերեսը, մանրացվում են կոշտերը և ոչնչացվում մոլախոտերի ծիլերը: Հետևապես գարնանը ցրտահերկի ժամանակին փոցխումը կարևոր միջոց է հողի խոնավության պահպանման և մոլախոտերի ոչնչացման գործում:

Բոլոր երեք ստախանովյան օղակներում գիտեին փոցխելու

նշանակութեան կարեորութիւնը: Գարնանը, հենց որ հնարավոր
եղավ դաշա դուրս գալ, նրանց ամբողջ ցրտահերկը փոցլավեց
երկու հետքով:

Այն միջոցին, երբ օդակի անգամներ ի մի մասը դբաղված
էր փոցլեկով, մյուս մասն սկսեց սերմի մաքրումը ձեռքով:
Թեև սերմացուն գործարանից ստացվել էր լավ վիճակում (Քո-
լոզյանի օդակը՝ № 1928 սորտը, Քոչարյանի և Մելիքյանի՝
№ 246 սորտը), բայց և այնպես երկու անգամ ձեռքով զտվե-
լուց հետո նրա որակն էլ ավելի լավացավ:

1947 թվի մարտ տմսի նպաստավոր եղանակը ցածրագիր
շրջաններում հնարավորութիւն տվեց երեք օդակներին էլ ձեռ-
նամուխ լինել ցրտահերկի կրկնավարին:

Հետաքրքիր է ծանոթանալ Քոլոզյան Հոկտեմբերիկի օդակի
գարնան նախացանքային աշխատանքներին: Դաշտի վրա տեղա-
կան և հանքային պարարտանյութերը շաղ տսլուց հետո, հողա-
մասը հերկվեց 25—28 սմ խորութեամբ «УТЗ-60» տրակտորով:

Վարելուց հետո հողը փոցլավեց զիգզգ փոցլտով: Քսան օր
հետո կատարվեց երկրորդ վարը «УТЗ» տրակտորով 18 սմ խո-
րութեամբ, որից հետո հողը կրկին փոցլավեց:

Ինչպես առաջին, այնպես և երկրորդ գարնանավարի ժա-
մանակ հողամասը պարարտացվեց, բայց այս անգամ միայն
տեղական պարարտանյութերով:

Հողի նախացանքային պատրաստութեան համար Մելի-
քյանի և Քոչարյանի օդակները մոտավորապես նույն ձևով աշ-
խատեցին:

Օդակներում կատարված նախացանքային մշակման առան-
ձին պրոցեսների մասին համապատասխան տվյալներ բերվում
են № 2 աղյուսակում (տես էջ 40):

Բերված աղյուսակից տեսնում ենք, որ գարնանը հողի
մշակման ժամկետների և նրա քանակի տեսակետից օդակների
միջև տարբերութիւն չկա: Քոլոզյանի օդակում միայն առաջին
դարնանավարն ավելի խորն է կատարվել:

Սակայն խիստ էական տարբերութիւն կա հողը պարար-
տացնելու մեջ: Մելիքյանի ու Քոլոզյանի օդակները բավարար-
վել էին միայն աշնանը ցրտահերկի ժամանակ պարարտանյութ
տալով, իսկ գարնանը նրանք դաշար չէին պարարտացրել:

	Քույրականի օգտին		Մեկնության օգտին		Քույրականի օգտին	
	1 Կրկնականի ժամանակ	2 Կրկնականի ժամանակ	1 Կրկնականի ժամանակ	2 Կրկնականի ժամանակ	1 Կրկնականի ժամանակ	2 Կրկնականի ժամանակ
1. Հողամասի տարածությունը	9,5 հեկտ.	9,5 հեկտ.	3 հեկտ.	3 հեկտ.	3 հեկտ.	3 հեկտ.
2. Գարնան վաղի մակերեսը՝ սկզբը	20/3	9/4	15/3	5/4	18/3	6/4
վերջը	25/3	10/4	18/3	8/4	19/3	7/4
խորությունը	25—28 սմ	18 սմ	20—22 սմ	18 սմ	20 սմ	18 սմ
Ինչ տրակտորով է կատարված վաղը	ՉՏՀ	ՄՏՀ	ՄՏՀ-նԱՏԻ	ՄՏՀ-նԱՏԻ	ՄՏՀ-նԱՏԻ	ՄՏՀ-նԱՏԻ
3. Փայտանձի սկզբը	21/3	9/4	16/3	6/4	19/3	7/4
վերջը	25/3	10/4	19/3	8/4	20/3	8/4
4. Մոլորակների հավաք՝ սկզբը	21/3	9/4	16/3	6/4	19/3	7/4
վերջը	26/3	11/4	19/3	9/4	20/3	8/4
5. Պարարտացում՝ տարածությունը	3 հեկտ.	3 հեկտ.	—	—	—	—
ամեն կում սուլֆատ	0,6 տ.	—	—	—	—	—
սուպերֆոսֆատ	0,45 տ.	—	—	—	—	—
տեղական պարարտանյութ (խառն աղը)	20 տոն.	15 տոն.	—	—	—	—

Մեկիքյանի օղակի համար դա միանգամայն խելացի գործ էր, քանի որ, ինչպես ասվեց վերը, նրա հողամասի նախորդող կուտուրան հղել է առվույտը:

Այդ բանը նույնքան հասկանալի է նաև Բոչարյանի օղակի համար, որն, ինչպես մենք նշեցինք, հողամասը խիստ բարձր դոզաներով էր պարարտացրել դեռևս աշնանը: Այլ կերպ վարվեց Բոլոզյանը, որը գարնանը օղակին ամբողջած հողի մի մասը, այսինքն՝ 3 հեկտարը պարարտացրեց ոչ միայն առաջին, այլև երկրորդ վարի ժամանակ, ընդհանուր հաշվով աշնանը և գարնանը մեկ հեկտարին տալով (նշված 3 հեկ. հողակտորի վրա) 110-ական կիլոգրամ մաքուր ազոտ և ֆոսֆորաթթու, դրան ավելացրած նաև 35 տոննա տեղական պարարտանյութ:

6. Յ Ա Ն Ք

Հաջող ավարտելով հողի նախացանքային մշակումը և ունենալով ընտրովի, տեսակավորված սերմ, Բոլոզյանի, Մեկիքյանի և Բոչարյանի օղակները ձեռնարկեցին բամբակի ցանքին:

Գիտությամբ և պրակտիկայով հաստատված է, որ բամբակի ցանքը պետք է սկսել այն ժամանակ, երբ հողի ջերմությունը լինում է 12—15° Ց: Ավելի վաղ ժամկետներում ցանված սերմերը ուշ են ծլում և երկար ժամանակ մնալով խոնավ ու սառը հողի մեջ փուռում են:

Հայաստանում բամբակի ցանքի լավագույն ժամանակը համարվում է 15/IV-ից մինչև 1/V-ը:

Ցանքի ագրոտեխնիկայի երկրորդ պայմանը—ցանքը ամենակարճ ժամկետներում կատարելն է: Ավելի արագ ցանելը նշանակում է ժամանակ շահել բամբակի հետագա զարգացման համար, նշանակում է մինչև սառնամանիքների վրա հասնելը յուրաքանչյուր բույսից ավելի շատ բացված կնգուղ ստանալ:

Բամբակի ճիշտ ցանքի հաջորդ պայմանը՝ դա սերմացուի նորմայի պահպանումն է (հեկտարին 80 կիլոգրամից ոչ պակաս) և սերմերը պահանջված խորությամբ ցանելը (2—3 սմ): Սերմերի ավելի խորը ցանելը դժվարացնում է ծլումը, իսկ ավելի երես արված ցանքը կարող է սերմերի կորուստ առաջացնել:

Ստախանովական օղակները զիտեն ցանքի այդ բոլոր հիմնական ագրոտեխնիկական կանոններն ու պայմանները:

Յանքի կարևորագույն գործողությունը բոլոր օդակներում կատարվեց երկու զարնանավարից և փոցխումից հետո, հենց որ տաքացավ հողը: Յանքի ժամկետներն հանդիսանում են օպտիմալ և բավական սեղմ, ինչպես այդ կարելի է տեսնել ստորև բերված տվյալներից.

	Յանքի սկիզբը	Յանքի վերջը
Քոլոզյանի օդակում	15/4	16/4
Մելիքյանի »	18/4	18/4
Քոչարյանի »	20/4	21/4

Սերմերը ցանվեցին 2—3 սմ խորություն՝ Գոլոզյանի հողամասում սերմերի ցանքի նորման 80 կիլոգրամ էր մեկ հեկտարին: Գոմոգ հիվանդության դեմ պայքարելու նպատակով, նախքան ցանքը սերմը ախտահանվեց ֆորմալինի լուծույթով:

Բոլոր երեք օդակավարները՝ Քոլոզյանը, Մելիքյանը և Քոչարյանը իրենք էին աշխատում շարքացանների վրա, խստորեն հետևելով շարքացանի աշխատանքին, յուրպեսզի սերմերը հավասար խորություն՝ ցանվեն և պահպանվի ցանքի նորման:

Միջշարքային տարածությունը սահմանվեց 70 սմ: Ցլաջրի (սապուղվարի) համար ակոսները բաց արվեցին ցանքի հետ միաժամանակ տրակտորային հատուկ շարքացանով: Յանքի միջոցին խստիվ պահպանվում էին շարքերի ուղղությունը, որն անհրաժեշտ պայման է հանդիսանում տրակտորային միջշարքային մշակումն ապահովելու համար:

7. ՅԱՆՔԻ ԽՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՆՈՍՐԱՅՈՒՄԸ

Յուրաքանչյուր բույսի համար սնման մակերեսի ապահովումը բարձր բերքի կարևորագույն պայմանն է, քանի որ նրանով է, որ պայմանավորվում է բույսերին բավականաչափ խոնավությունը, աննդանյությունը և արեգակի լույսով ապահովելը:

Մեկ միավոր տարածության վրա նորմալից շատ բույսեր լինելու դեպքում, նրանք սկսում են խանգարել միմյանց, նրանց մի մասը մնում է սովիւրում, զրկվում է իր զարգացման համար անհրաժեշտ խոնավությունից և աննդարար նյութերից:

Նույնքան աննպատակահարմար է նաև բույսերի համար անման մեծ մակերես թողնելը, քանի որ այդ դեպքում ցանված տարածության մի մասը մնում է չօգտագործված, որի հետևանքով բամբակի և ընդհանրապես բոլոր մյուս գյուղատնտեսական կուլտուրաների ընդհանուր բերքը պակասում է:

Բամբակինու համար, Հայկական ՍՍՌ-ի պայմաններում, նորմալ է համարվում մեկ հեկտարի վրա թողնել 100—110 հազար բույս, նայած հողին և սորաին: Այդ դեպքում մեկ բույսին հասնում է մինչև 0,1 քառ. մետր սննդարար տարածություն, որը միանգամայն բավական է:

Մեր ստախանովական օդակները շատ լատ գիտակցեցին այդ խնդրի ամբողջ կարևորությունը: Իրա համար էլ, ծիլերը ստացվելուց հետո, նրանք իրենց ամբողջ ուշադրությունը կենտրոնացրին այն բանի վրա, որ տարածության մեկ միավորի վրա պահպանվի բույսերի անհրաժեշտ քանակությունը:

Խնդիրը նրանում էր, որպեսզի նոսրացումը կատարվեր ժամանակին և ճիշտ, ամբողջ տարածության լիակատար օգտագործումով, այսինքն՝ չցանված ծալրամասերը ցանվեին լրացուցիչ կերպով, ինչպես նաև նոսրացման ժամանակ ցանվեին շարքերի վրա չծած տարածությունները: Այս ուղղությամբ հետաքրքիր է ծանոթանալ երեք օդակներից մեկին՝ ընկ. Քոլոդյան Հովհաննեսիկի աշխատանքների հետ:

Նրա հողամասի վրա, ջրելուց հետո, ծիլերը երևացին մի քիչ ավելի ուշ՝ տասնմեկ օր հետո, փոխանակ նորմալ 6—7 օրի, ապրիլի երկրորդ կեսին հողի մեջ ջերմությունը պակաս լինելու պատճառով:

Ծիլերի գույս գալու միջոցին Քոլոդյանը խնամքով ստուգեց հողամասի յուրաքանչյուր մետրը, ծիլերի բացակայության պատճառները որոշելու և նորմալ խոնավությունը ապահովելու համար միջոցներ ձեռք առնելու նպատակով:

Բամբակի նոսրացումն օդակը կատարեց երկու նվազում: Առաջին նոսրացումն սկսվեց բոլոր ծիլերի երևան գալու միջոցին: Այդ նոսրացման ժամանակ ընների մեջ թողնվում էր 15 սմ տարածություն, այսինքն՝ վերջնական տարածության կեսի չափը: Յուրաքանչյուր ընում թողնվում էր 3—4-ական բույս: Նոսրացման աշխատանքը շարունակվեց 6 օր: Նոսրացման հետ միա-

ժամանակ Քուղդյանը չձևած տեղերում կրկին անգամ ցանեց ծխեցրած սերմեր, տեղ-տեղ էլ նախապես սլաքորաստված բներում սածիլեց շաքեբրի խիտ տեղերից իրենց խակ հողով վերցրած բամբակի ծիլեր:

Հատուկ նշանակություն տալով այդ աշխատանքին, Քուղդյանը նրա կատարման համար նշանակեց օգակի ամենավերձված և ամենաճարպիկ անդամներին, ըստ որում, զիմադրված լուսնից խուսափելու համար, նրանցից յուրաքանչյուրին կցվեց որոշ հողակտոր: Բամբակի առաջին նոսրացումից անմիջապես առաջ ձիաքարը կուլտիվատորով կատարվեց միջշաքային փխրեցում 8—10 սմ խորությամբ: Այդ միջոցը առանձնապես անհրաժեշտ էր Քուղդյանի օգակի համար, որի գաշտի հողերը ծանր էին և ջրելուց հետո հաստ կեղև էր առաջանում: Կուլտիվացիան անց էր կացվում օգակավարի անմիջական հսկողության տակ:

Կուլտիվացիայից անմիջապես հետո շաքեբրի վրա կատարվեց քաղհան և որոշ տեղերում շտկվեցին հողով ծածկված ծիլերը: Մայիսի երրորդ տասնօրյակի սկզբին բույսերի վրա երևացին 1—2, իսկ տեղ-տեղ էլ 3 իսկական տերևիկներ: Օգակում սկսվեց բամբակի երկրորդ և վերջին նոսրացումը: Նոսրացման հետ միաժամանակ (մինչև առաջին վեգետացիոն ոռոգումը) կատարվեց ևս մի ձիաքարը կուլտիվացիա և քաղհան: Նոսրացնելիս հեռացվում էին թույլ զարգացած, գոմոզով հիվանդ և ֆուսատուներին ֆուսոված բույսերը:

Երկրորդ նոսրացումից հետո բների միջև եղած տարածությունը կաղմեց 30 սմ, իսկ ամեն մի բնում թողնվեց երկուսական բույս, միայնցից 4—5 սմ հեռավորությամբ: Նրանց շուրջը եղած հողը փխրեցվեց, որով ապահովվեց օդի ազատ մուտքը գեպի արմատիկները և երիտասարդ բույսերը ստացան բարենպաստ պայմաններ իրենց արագ աճի համար:

Նոսրացումը ավարտելուց հետո օգակավար Քուղդյանը երրորդ տասնօրյակում մեկ անգամ ևս անձամբ ստուգեց և որոշեց բամբակինու բույսերի խտությունն ու մանրամասն հաշվարկումներով համոզվեց, որ իր հողամասի յուրաքանչյուր հեկտարի վրա բույսերի քանակը տատանվում է 100-ից մինչև 102 հազարի սահմաններում:

Մոտավորապես այդ կարգով էլ անցկացրին իրենց առաջին

ներք քաղհանները Մելիքյանի և Գոչարյանի օղակները: Սակայն այդ ժամանակամիջոցում նրանց աշխատանքն ավելի բարդ էր, քան Բոլոզյանինը, քանի որ նրանց հողամասերը մայիսի 13-ին կարկտահարութեան ենթարկվելով՝ խիստ վնասվեցին և ծիւլերի 25—30 տոկոսը ոչնչացավ: Այս օղակները, ինչպես ասել ենք, ստիպված կղան շատ մեծ աշխատանք կատարել իրենց հողամասում բույսերի անհրաժեշտ քանակն ապահովելու համար: Նրանք պատվով կատարեցին իրենց խնդիրը և Բոլոզյանի նման երկրորդ նոսրացումից հետո հեկտարի վրա պահպանեցին մինչև 100 հազար բույս:

Առանձին օղակների նոսրացման ժամկետները հետևյալներն են.

Աղյուսակ № 3

	Ծիւլերի երևալը		Առաջին նոսրացում		Երկրորդ նոսրացում	
	Սկիզբը	Վերջը	Սկիզբը	Վերջը	Սկիզբը	Վերջը
Բոլոզյանի օղակը	26/4	1/5	28/4	5/5	20/5	26/5
Մելիքյանի »	27/4	30/4	1/5	5/5	18/5	22/5
Գոչարյանի »	28/4	30/4	1/5	4/5	16/5	20/5

8. ԿՈՒԼՏԻՎԱՑԻԱ ԵՎ ՓԽՐԵՑՈՒՄ

Բամբակի ամառային մշակումը—կուլտիվացիան և փխրեցումը—ցանքի խնամքի միջոցառումների մեջ կարևոր և զլխավոր տեղերից մեկն է զբաղում: Կուլտիվացիայի և փխրեցման միջոցով բամբակենու ցանքերը պահպանվում են փուխը և մուխը տեղից մաքրված վիճակում: Հողի փխրուն վիճակը վերացնում է նրա մեջ մաղականութեան վերականգնման հնարավորութիւնը, հետևապես և ապահովում է խոնավութեան պահպանումը հողում, օժանդակում է հողերի աերացիային և ստեղծում է բոլոր պայմանները, որպեսզի բույսը կարողանա ավելի լավ յուրացնել սննդարար նյութերը, մանավանդ, որ այդ սննդարար նյութերն ամբողջովին բաժին են ընկնում բամբակենուն, որովհետև լավ մշակված դաշտում մոլախոտեր չեն լինում:

Բամբակենու ամառային մշակումը լավ էր դրված Քոլոդյանի, Մելիքյանի և Քոչարյանի ստախանովական օղակներում: Բոլոր այդ օղակներում անցկացվեց 7—8 փխրեցում և 5—7 կուտիվացիա: Ինչպես կուտիվացիան, այնպես և փխրեցումը կատարվում էր 14—15 սմ խորությամբ, բացառությամբ առաջին երկու մշակումների, որոնք կատարվում էին տվելի քիչ խորությամբ, որպեսզի չփնտալեն երիտասարդ բույսերը:

Մշակումների ժամկետները սերտորեն կապված էին ջրման ժամկետների հետ: Նրանք կատարվում էին ջրումից հետո, հենց որ հողը «հասունացման» վիճակին է հասնում: Դրանով իսկ ձեռք էր բերվում մշակման հիմնական նպատակը—խոնավության պահպանումը և պայքարը մոլախոտերի դեմ, որոնց ուժեղ աճը ավելանում է հատկապես ջրելուց հետո:

Բացի դրանից պահպանվում էր մի հիմնական կանոն ևս—հատկապես այն, որ քաղհանը միշտ կատարվում էր կուտիվացիայից հետո և ոչ թե հակառակը:

Օղակների կատարած կուտիվացիաների և քաղհանների քանակի ու ժամկետների մասին ստորև բերված են համապատասխան տվյալներ (տես աղյուսակ № 4):

9. ԲԱՄԲԱԿԵՆՈՒ ՄՆՈՒՅՈՒՄԸ

Ստախանովականների օղակներում բույսերին անուցում (օժանդակ անունդ) տրվեց բամբակենու կոկոնակալման, ծաղկման և կնգուղները երևան գալու ժամանակ, այսինքն այն ժամանակ, երբ բամբակենին, իր զարգացման համար առանձնապես սուր կարիք է գգում աննգարար նյութերի:

Բույսն ստանալով բավականաչափ հանքային պարարտանյութեր իր զարգացման բոլոր ստադիաներում, ուժեղ թափով զարգացնում է արմատային սխտեմը և հզոր վերերկրյա մասը, որոնք անհրաժեշտ են բարձր բերք ստանալու համար:

Ստախանովական օղակները տարբեր ձևով մոտեցան իրենց հողամասերում անուցման իրականացման գործին:

Այսպես, օղակավար Մելիքյան Աղավին չկիրառեց անուցում, հլենով այն բանից, որ իր հողամասում նախորդող բույսը եղել էր առվույտ, որը հարստացնում է հողն ազոտով: Բայց,

Օրակա- պահանջ և բաժնակի տարածու- թյունը	Աշխա- տանքի անվա- նումը	1		2		3		4		5		6		7	
		Սկիզբ	վերջ	Սկիզբ	վերջ	Սկիզբ	վերջ	Սկիզբ	վերջ	Սկիզբ	վերջ	Սկիզբ	վերջ	Սկիզբ	վերջ
Քուղղյան	Կուլտի- վացիա	4/5	8/5	19/5	23/5	10/6	15/6	23/6	27/6	7/7	12/7	24/7	28/7	5/8	10/8
9,5 հեկտար	Քաղհան	5/5	9/5	20/5	24/6	11/6	16/6	24/6	28/6	8/7	13/7	25/7	29/7	6/8	11/8
Մեկեթյան	Կուլտի- վացիա	--	--	17/5	18/5	12/6	13/6	19/6	20/6	4/7	8/7	27/7	28/7	--	--
3 հեկտար	Քաղհան	5/5	8/5	18/5	22/5	13/6	17/6	20/6	23/6	5/7	9/7	28/7	29/7	3/8	8/8
Քուղղյան	Կուլտի- վացիա	--	--	--	--	--	9/6	10/6	19/6	--	--	--	--	--	--
3 հեկտար	Քաղհան	1/5	4/5	16/5	18/5	10/6	13/6	20/6	22/6	5/7	8/7	23/7	25/7	2/8	5/8

Ծանոթություն — Քուղղյանի խոտ առաջին երկու կուլտիվացիաները կատարվել են ձկնաբարձ կուլտիվատորներով:

իհարկե, այդ հարցում նա իրավացի չէր, քանի որ, եթե առանձին անհրաժեշտութիւնն էլ չկար սնուցման ժամանակ ազոտ տալ, ապա միևնույն բանը չի կարելի ասել ֆոսֆորային պարարտանյութերի մասին, քանի որ առվույտը հողից վերցնում է զոլալի քանակութեամբ ֆոսֆոր: Հետևապէս Մելիքյանը սնուցման ժամանակ պետք է հարստացնէր իր հողը այդ պարարտանյութով և չսահմանափակվէր միայն ցրտահերկի ժամանակ սուպերֆոսֆատ տալով:

Միանգամայն ճիշտ իրազործեցին սնուցումը Քոլոզյանի և Քոչարյանի օգտին: Սակայն նրանց մոտ սնուցման նորմաներն ու ժամկետները տարբեր են եղել:

Քոչարյանը սնուցումը կատարեց երեք նվազում, որոնք համընկնում էին կուլտիվացիայի երրորդ, հինգերորդ և յոթերորդ ժամկետների հետ: Յուրաքանչյուր անգամ հեկտարին հավասար մասերով տրվել է մաքուր ազոտ 25 կիլոգրամ, ֆոսֆորաթթու՝ 25 կիլոգրամ և տեղական պարարտանյութ՝ 5 տոննա:

Օղակավար Քոչարյանը սնուցումը անցկացրեց երկու նվազում—երրորդ և հինգերորդ կուլտիվացիայի միջոցին: Նա տվեց միայն ազոտ, ամոնիակային սելիտայի ձևով, ըստ որում միջին հաշիվով հեկտարին երկու սնուցումով տրվեց մոտավորապէս 70 կիլոգրամ մաքուր ազոտ:

Սնուցումը պետք է անցկացնել խելացիորեն: Եթե նույնիսկ շատ մեծ քանակութեամբ պարարտանյութեր տրվեն ոչ ճիշտ կերպով, ապա ամբողջ պարարտանյութը և աշխատանքը իզուր կկորչին: Հաճախ պարարտանյութերը շաղ են տալիս շարքերում, թողնում են մի քանի օր, մի թեթեւ ծածկում են ու հետո ջրում: Այդ դեպքում պարարտանյութերի մեծ մասը կորչում է մինչև ծածկելը, մի մասը թեթեւ ծածկված լինելու պատճառով ֆնում է հողի երեսը և նույնպէս չի արդարացնում իրեն ու միայն աննշան մասն է հասնում մինչև բամբակենու արմատները և սնում նրան:

Քոլոզյանի և Քոչարյանի աշխատանքին օժանդակող գյուղատնտեսները կանխեցին այդ սխալները: Պարարտանյութերը նրանց մոտ շաղ էր տրվում ձեռքով բամբակենու արմատների մոտ և ապա ծածկվում միջշարքային և միջնային տարածութիւնների խորը փխրեցմամբ: Այնուհետև աղտոներ էին բացվում և անմիջապէս տրվում էր հերթական վեգետացիոն ջուրը:

Բաժնակենսու զարգացման ընթացքում ոռոգման ջուրը ամենից հզոր ֆակտորներից մեկն է հանդիսանում: Սակայն բաժնակենսու ջրելու պահանջը միշտ միատեսակ չէ և մեծ տատանումներ է ենթակա նրա զարգացման զանազան ստադիաներում:

Այսպես, մինչև կոկոնները երևան այդ պահանջը համեմատորեն աննշան է, այնուհետև սկսում է ավելանալ և իր գագաթնակետին է հասնում բաժնակենսու ծաղկման շրջանում, որը գուրգադելու է ամառվա ամենաշոգ օրերին:

Չկարողանալ կանոնավորել բաժնակի ցանքերի ջրային ռեժիմն առանձնապես ամառվա ընթացքում, այդ նշանակում է պտղավիժումը մեծ չափերի հասցնել, նշանակում է զրկվել բերքից և ապարդյուն դարձնել բաժնակի վրա տարած աշխատանքը: Ջրման աշխատանքները ճիշտ կարգավորելու համար անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն բաժնակենսու զարգացման ֆազերը, այլև հողային առանձնահատկությունները, որոնց պայմաններում տեղի է ունենում բույսի աճը: Այսպես, թեթև հողերը, որոնք արագ են չորանում, պետք է ջրել ավելի հաճախ, քան կավային հողերը: Անհրաժեշտ է նույնպես հաշվի առնել ստորերկրյա ջրերի բարձրությունը: Եթե նրանք մոտ են վարելահողի շերտին, ոռոգումը պետք է կատարել ավելի ուշ-ուշ:

Այս հարցի ճիշտ լուծման գործում առանձնապես մեծ է դյուղատնտեսի դերը: Այդ պատճառով մեր ստախանովահան օդակները համառորեն հետևում էին շրջանի ագրոպեստային ցուցմունքներին, յուրաքանչյուր անգամ ջրման ժամկետները համաձայնեցնելով դյուղատնտեսների հետ:

Մենք այստեղ չենք բերի մեր կողմից ուսումնասիրված օդակների յուրաքանչյուրի կատարած ջրման ժամկետները, քանի որ նրանք համընկնում են կուլտիվացիայի և փխրեցման ժամկետների հետ, ավելի ճիշտը՝ նրանք միշտ էլ հախորդել են նրանց: Համառոտակի կարելի է ասել միայն մի բան, որ այդ ջրումները կատարվել են հետևյալ ձևով. մինչև ծաղկելը՝ 2 ջրում, ծաղկման շրջանում՝ 4—5 ջրում և հասունացման շրջանում՝ 1—2 ջրում:

Ստախանովահանները հատուկ ուշադրություն էին դարձ-

նում բամբակենու ջրելու ձևերի վրա: Հայաստանում առայժմ ջրման երկու ձև է կիրառվում—ակոսային և մարգային:

Ջրման մարգային ձևը կամ մեթոդը կիրառելիս՝ ջուրը օդատարժվում է չափազանց անխնայողաբար կերպով, ջրելուց հետո հողի մակերեսին առաջանում է հաստ կեղև, վատանում է հողի ստրուկտուրան, ջրով ողողվում է ամբողջ հողամասը և հողը դառնում է անթափանց՝ օդի համար:

Բացի դրանից, այս սխեմանով ջրելիս հնարավոր է բոլոր բույսերին հավասարապես ջուր հասցնելը: Հաճախ մարգերի միջին մասում բավարար չափով ջուր չի կուտակվում, մինչդեռ, մարգի թմբերի մոտ գտնվող բույսերը պահանջից ավելի են ջրվում: Այս կապակցությամբ բամբակի զարգացումն էլ անհամաչափ է լինում:

Ջրման ակոսային ձևը գրեթե ամբողջովին վերացնում է մարգային ձևի այդ թերությունները:

Այս վերջին ձևի կիրառման ժամանակ ջուրը՝ բարակ հոսանքով բաց թողնվելով նախօրոք բացված միջլարքային ակոսներով, ներծծվում է հողի մեջ, որի հետևանքով ջուրը ամբողջ հողամասով մեկ տարածվում է հավասարապես և բույսերի արմատները լիովին հագեցնում են խոնավությամբ: Բացի դրանից, շնորհիվ այն բանի, որ ջուրը ակոսներով դանդաղ է հոսում և չի ողողում թմբերի մակերեսը, կեղև չի առաջացնում, հողը բույսի արմատների շուրջը մնում է փուխը, ուստի և հողի ստրուկտուրան չի վատանում, հողի անբացիտան շարունակվում է և նրա մեջ չեն զարգարում անհրաժեշտ ֆիզիկո-քիմիական պրոցեսները:

Մեր կողմից ուսումնասիրված երեք ստախանովական օդակներն էլ կիրառել են հենց ակոսային ջրման այս ձևը:

Շնորհիվ ջրման այս ձևի՝ Գոլոդյանի, Մելիքյանի և Գոչարյանի օդակներին հաջողվեց հասնել այն բանին, որ բամբակենին նրանց բոլոր հողամասերում զարգացավ միատեսակ լավ, պտղավիժումը ամեն տեղ իջավ նվազագույն չափի և ապահովվեց բարձր բերք ստանալով:

11. ԲԱՄԲԱԿԻ ԾԵՐԱՏՈՒՄԸ

Լիարժեք բերք ստանալու շատ անհրաժեշտ միջոցառում է հանդիսանում բամբակի ձերատումը: Իր ժամանակին կատար-

ված ծերատոււմը, որի կիրառումով հեռացվում է գլխավոր ցողունի աճման կոնը և դրանով կանգնեցվում է հետագա աճը, մեծ չափով ավելացնում է կնգուղների քաշը և մոտ մի շաբաթ դե ավելի արագացնում է հասունացումը, որը, իհարկե, մեծ նշանակութիւն ունի բերքահաւաքն ապահովելու համար մինչև սառնամանիքների վրա հասնելը և հետևաբար ավելի լավորակ բամբակի հումք ստանալու համար:

Դժբախտաբար մեր ուսումնասիրած ոչ բոլոր օղակներն են կիրառել բամբակի ծերատոււմը: Միայն Մելիքյանի օղակը իրականացրեց այդ միջոցառումը իր հողամասում: Նա այդ աշխատանքն անցկացրեց մինչև մասսայական պտղավիժումը, երբ բամբակենու յուրաքանչյուր թփի վրա կար 12-ից մինչև 14 սիմպոդիալ ձյուղ:

12. ՊԱՅԳԱՐ ԲԱՄԲԱԿԵՆՈՒ ՎՆԱՍՏՏՈՒՆԵՐԻ ԵՎ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ

Պայքարը ֆնասատուների և հիվանդութիւնների դեմ՝ բամբակենու բարձր բերք ստանալու վճռական միջոցառումներից մեկն է հանդիսանում: Այդ արդեն հանրածանոթ է: Ստախանովյան ագրոտեխնիկան զգալի չափով վերացնում է ֆնասատուների և հիվանդութիւնների դարգացման պայմանները: Սակայն նրանց հայտնվելը ստախանովական պլանտացիաներում մեծ չափով կապված է կոլխոզային դաշտերի բնդհանուր կուլտուրական վիճակի հետ: Առայժմ կոլխոզներում դեռևս բոլորովին չի ոչնչացել գյուղատնտեսական ֆնասատուների դարգացման բաղան: Այդ պատճառով կոլխոզային դաշտերի ստախանովականներն իրենց հողամասերում, բացի պրոֆիլակտիկ միջոցներ ձեռք առնելուց, միշտ էլ պատրաստ են եղել պայքարելու ֆնասատուների դեմ, նրանց ոչնչացնելու նպատակով:

Ինչպես արդեն վերը ցույց տրվեց, բոլոր ստախանովականները, որպեսզի ոչնչացնեն գոմղը, ցանքը կատարեցին ֆորմալինով և ևստահանված սերմերով:

Վեգետացիայի շրջանում մեր ուսումնասիրած ստախանովական օղակներում շատ թե քիչ չափով տարածված են եղել հետևյալ ֆնասատուները՝ բամբակագործութիւնն ամենից ավելի

շատ փնաս պատճառող ոստայնավոր տիղը (չոռ) և լվիճը (Քոչարյանի հողամասում):

Քոչարյանի օղակի բամբակենու վրա լվիճը երևան եկավ հունիս ամսի սկզբին: Իր ժամանակին վճռական պայքար չտանել լվիճի դեմ, այդ նշանակում է երկար ժամանակով ձգձգել վեգետացիան և իջեցնել բամբակի բերքը: Սակայն Քոչարյանը ժամանակին սկսեց պայքարը: Բույսերի հետագա վերականգնումն ու փնասվելը կանխելու համար օղակը կատարեց երկու սրսկում անաբազին-սուլֆատի և օճառի լուծույթով: Առաջին սրսկումը կատարվեց հունիսի 2—6-ին, երկրորդը՝ 10—16-ին:

Շնորհիվ ժամանակին ձեռք առնված միջոցների, լվիճի հետագա տարածումը դադարեցվեց:

Ոստայնավոր տիղը (չոռ) բոլոր օղակներն ցանքերում երևան եկավ հունիս ամսի սկզբին:

Չոռի դեմ պայքարը տարվեց պոլիսուլֆիտ կալցիումի լուծույթով ցանքերը սրսկելու միջոցով, սկզբում օջախներով, իսկ հետո՝ ամբողջ պլանտացիայի վրա:

Ամբողջ վեգետացիոն շրջանում ընդամենն անցկացվեց երեքից-հինգ սրսկում և երկու-երեք փոշոտում՝ ծծումբով (վերջինները—հեկտարին 50 կիլոգրամ ծծումբի հաշվով):

Ստորև բերվում են օղակներում «չոռի» (ոստայնավոր տիղի) դեմ կատարված քիմիական մշակութային ժամկետները.

Այլուսակ № 5

	Քոչարյանի օղակը	Մեղիբյանի օղակը	Քոչարյանի օղակը
Սրսկում			
I	10/6—15/6	5/6— 8/6	10/6—16/6
II	24/6—28/6	15/6—19/6	4/6— 6/6
III	10/7—14/7	23/6—26/6	7/6—13/6
IV	— —	30/6— 3/7	14/6—20/6
V	— —	10/6—14/7	21/6—27/6
Փոշոտում			
I	8/8—13/8	3/8— 5/8	1/8— 3/8
II	21/8—24/8	20/8—25/8	15/8—16/8
III	—	25/8—28/8	—

13. ԲԱՄԲԱԿԻ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԸ

Բարձրորակ մակարդակի վրա անցկացնելով բամբակենու խնամքի բոլոր տշխատանքները, երեք օղակներն էլ իրենց դաշտերում հրաշալի բերք աճեցրին: Մնում էր հավաքել այդ բերքը: Իսկ այդ հեշտ գործ է: Այստեղ ևս, ինչպես և բոլոր մյուս աշխատանքներում, պահանջվում է հմուտություն և փորձառություն, որպեսզի կորուստ չլինի բերքահավաքի միջոցին, չխառնվեն հումքի սորտերն և այդպիսով չիջնեն աճեցվող բերքի քանակն ու որակը:

Ստախանովական օղակները դեռևս մինչև բերքահավաքը սկսելն անցկացրին մի շարք նախապատրաստական աշխատանքներ, որպեսզի ապահովեն նախ և առաջ բերքահավաքի բարձր որակը և երկրորդ՝ հավաքված բամբակի անխափան փոխադրումն ու հանձնումը մթերման կայաններին:

Ամենից առաջ օղակի բոլոր անդամներին տրվեցին գոգնոցներ՝ գրպան-«բաժանմունքներով»: Այդ գրպանների մեջ ջուկ-ջուկ դրվում էին բամբակի հումքի տարբեր սորտերն այնպես, որ չխառնվեն հիվանդները, չհասունացածները, թափվածները մաքուր և առողջ բամբակի հետ: Բացի այդ, վերանորոգվեցին դեպի օղակների հողամասերը տանող բոլոր ճանապարհները, կամուրջները և այլն:

Բոլոր օղակների յուրաքանչյուր անդամի համար կազմվեցին բերքահավաքի օրացույցային պլաններ, որոնց մեջ հաշվի էին առնվում բամբակի հասունացման ժամկետները և սպասվելիք բերքն օղակի հողամասերում և այդպիսիները համաձայնեցվում ըրիգադիրի ու կոլխոզի նախագահի հետ:

Այդպիսով վերացվեցին ոչ միայն դիմադրելությունը, այլև այն պարագուրդները, երբ այս կամ այն կոլխոզնիկը, չգիտենալով իր հողամասը, իզուր շրջում էր շարքից շարք, խանգարելով թե իր և թե ուրիշի աշխատանքը:

Այն կոլխոզները, որտեղ աշխատել են մեր ուսումնասիրած աստախանովական օղակները, բամբակի ընդունման և տեսակավորման համար առանձնացրել էին հատուկ մասնագետ-տեսակավորողներ կոլխոզի փորձառու բամբակագործների միջից:

Բերքահավաքի կապակցությամբ կարևոր նախապատրաս-

տական աշխատանքների թվին է պատկանում դաշտի լիակատար մաքրումը մոլախոտերից, մասնավորապես նրանցից ամենավտանգավորից՝ կպչուկից, որը չափազանց դժուր է բամբակի որակը:

Ենելով դրանից, Քոլոդյանի, Մելիքյանի և Քոչարյանի օղակները մեծ աշխատանք տարան դաշտերը մոլախոտերից մաքրելու համար, կատարելով ձեռքի երկու քաղհան օգոստոսի երկրորդ տասնօրյակի սկզբին և սեպտեմբերի առաջին տասնօրյակին:

Բերքահավաքին բոլոր երեք օղակներն էլ ձեռնարկեցին միաժամանակ, երբ բամբակենու ստորին սիմպոդիալ ճյուղերի վրա բացվեցին առաջին կնգուղները:

Օղակավարներն իրենք՝ Քոլոդյանը, Մելիքյանը և Քոչարյանը, իհարկե, օղակների մյուս անդամների հետ համահավասար մասնակցում էին բամբակի բերքահավաքին: Բայց դրա հետ միաժամանակ նրանք իրենց մոտ խիստ վերահսկողություն սահմանեցին՝ յուրաքանչյուր կնգուղի բերքն իր ժամանակին և որակով հավաքելու համար, որպեսզի չձգձգվի բերքահավաքը և դրանով իսկ չիջնի բամբակի որակը, որպեսզի կնգուղում չմնա բամբակի հումքի թեկուղ մի փոքր մասը և ղեանով իսկ որևէ կորուստ չառաջանա բերքահավաքի ժամանակ:

Մինչև սառնամանիքները նրանք հավաքեցին միայն լավ բացված, հասունացած կնգուղները, որով և ապահովեց հավաքված բամբակի հումքի բարձր որակը, այսինքն՝ հասան նրան, որ մինչև սառնամանիքները հավաքված բամբակի ճնշող մասը ընտիր և առաջին սորտի էր:

Սառնամանիքներից հետո հավաքեցին ամբողջ կիսաբացված և չբացված կնգուղները, որոնք հետո չորացվեցին և ապա նրանցից դուրս բերվեց հումքը:

Բամբակի բերքահավաքից հետո դաշտերը մաքրվեցին բամբակի ցողուններից և այլ մնացորդներից, որից անմիջապես հետո կատարվեց ցրտահրկի:

1947 թվի սառնամանիքները բամբակացան շրջաններում գրանցվեցին հեկտեմբեր ամսի վերջին:

Ըստ առանձին օղակների, մինչև սառնամանիքները հավաքված հումքը կաղմից ամբողջ բերքի հետևյալ տոկոսը՝

Քոլոդյանի օղակում	64,1	տոկոս
Մելիքյանի	» 70	»
Քոչարյանի	» 65	»

Ընդհանուր առմամբ Քոլոդյանի օղակը բարձր բերքի 3 հեկտարից հավաքեց 255,3 ցենտներ, այսինքն՝ յուրաքանչյուր հեկտարից 85,1 ցենտներ, իսկ մնացած 6,5 հեկտար տարածության յուրաքանչյուր հեկտարից 23,3-ական ցենտներ:

Մելիքյանի օղակը 3 հեկտարից հավաքեց 189 ցենտներ կամ 63 ցենտներ յուրաքանչյուր հեկտարից, իսկ Քոչարյանի օղակը միևնույն տարածությունից—165 ցենտներ կամ 55-ական ցենտներ յուրաքանչյուր հեկտարից:

Այսպես է կոլխոզային երեք ստախանովական օղակների փորձը բամբակագործության նկատմամբ: Այս փորձը ցույց է տալիս, որ աշխատանքը լավ կազմակերպելու և ագրոտեխնիկական ողջ կոմպլեքսը կիրառելու դեպքում, մեր կոլխոզիկները բարձր բերք ստանալու պայքարում կարող են հասնել ամենափայլուն արդյունքների ոչ միայն բամբակի, այլև բոլոր մյուս գյուղատնտեսական կուլտուրաների դժով:

Այդ փորձը հաջող կատարման գրավականն է այն պատմական խնդիրների, որոնք առաջադրվել են ՀամԿ(բ)Պ ԿԿ-ի փետրվարյան պլենումի կողմից մեր սոցիալիստական գյուղատնտեսությանը:

Ստախանովականների կատարած աշխատանքն ուղեցույց պետք է հանդիսանա մեր կոլխոզների համար բարձր բերք ստանալու և կոլխոզնիկներին է՛լ ավելի ունենոր դարձնելու գործում: Հենց դրա համար էլ անհրաժեշտ է, որ ստախանովականների փորձը յուրաքանչյուր կոլխոզնիկի սեփականությունը դառնա:



Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. Ներածական	5
2. Աշխատանքի կազմակերպումը օղակներում	13
3. Որոնք են ստախանովական ազդրոտեխնիկայի գլխավոր առանձնահատկությունները	29
4. Ազդրոտյան	34
5. Բամբակենու դաշտերի նախացանքային մշակությունը	35
6. Ցանք	41
7. Ցանքի խառուցյունն ու նոսրացումը	42
8. Կուլտիվացիա և փխրեցումը	45
9. Բամբակենու սնուցումը	46
10. Վեգետացիոն ջրում	49
11. Բամբակի ծերատումը	51
12. Պայքար բամբակենու ֆնասատուների և հիվանդությունների դեմ	51
13. Բամբակի բերքահավաքը	53

Խմբագիր՝ Ս. ԿԱՐԱԴՅՈՋՅԱՆ

Տեխ. խմբագիր՝ Մ. ԿԱՓԼԱՆՅԱՆ

Սրբագրիչ՝ Մ. ՊԱՐՈՆԻԿՅԱՆ

Հանձնված է արտադրության 12/VI 1948 թ., ստորագրված է տպագրության
28/VI 1948 թ. ՎՖ 03776, պատվեր 352, հրատ. 552, տիրած 1500.
3¹/₂ տպագր. մամուլ, մեկ մամուլում 36.480 տպագր. նիշ.

Հայկական ՍՍՌ ԳԱ տպարան, Երևան, Արուսյան 104.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0008620

ԳՅՈՒՂԱՑՆՑԵՍԱԿԱՆ ՍՆՐԻԱՅՈՎ

ԼՈՒՅՍ ԵՆ ՏՆՍԵԼ

1. Գ. Գաղթյան—Քիմիական տարրեր տարրերի նշանակութիւնը բույսերի համար
2. Ա. Հարութչունյան—Ինչպես պետք է պահել հանքային պարարտանյութը
3. Գ. Մարգարյան—Դյուրառեւտեղութեան մեջ օդապարծկող թռչնավոր նյութերը
4. Ա. Սարխոջյան—Գաղձը (գալլուկը) և պալքարը նրա դեմ
5. Գ. Խալաթյան—Թթնու տերեւ որպէս շերտմի կեր
6. Թ. Թադեւոսյան—Լորու մշակութիւնը Լենինականի հարթավայրում
7. Գ. Դաղթյան—Աղտակաւ պարարտանյութերը և նրանց կիրառումը
8. Ա. Մուրադյան—Հայաստանի վայրի գաթանախշիկները
9. Լ. Նեղնկյան—Ացիդոֆիլ կաթ
10. Ա. Գ. Նրիցյան—Կերերի սիլտացումը
11. Է. Ա. Գեւորտիմյան—Դյուրառեւտեղական թռչունների կերակրումն ու խնամքը